

4529

308(47.925)

47 - 31

1881

2010

ՊԵՐՏԻՋԱԿ

ՇԱՐԱԴՐԵԱԼ

Ի ՏԵՐՈՂԻ ԱԻԱԳՔԱՀԱՆԱՅԷ ՓԱՓԱԶԵԱՆ



Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱԼ

Ի ՆՈՐ ԲՈՒՂԸ

Ի ՏԳԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿԶԵԱՆ Ս. ՎԱՆԱՑ

308(47.929)
90-31

1881

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԼՈՐԳԻԱՅ Գ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ԱԶԳԱՍԵՐ ԿԱԹՈՒՂՈՍՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԵՒ

ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՅ ՎԱՆԱՑ ԱՄԵՆԱՓՐԵԶԵԱՆ

Բ. ՍՐԲԱԶԱՆ

Տ. ԳՐԻԳՈՐԻՍԻ

ԲԱՐԵԽԱՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



2001

1165
39

363 (47.925)

Փ-31

այ

ՁԵՆՈՒՑՈՒԾՆ

Ձանալան ժամանկերուն ձեր շարադրած աղօթոք-
յօթանքները նոր աքրէն հրապարակած էն աղօթյին անագորոց կամ
ղարէրէն ընթերթի ձեռնարկ. 'ե ձե խոսք հաւատելով կններէ
ձեր աղօթյին հանգան յոյն "ՊԱՐՏԻՉԱՆ" անուն քերական
ձեռնարկ, երբեք ձե ծաղկանք ինչ. անհարկայն ձե քերական
անայանքն աքրած կ'հարկանք ձե քերական աղօթն :

Մ. Ա. Գ. Փ.

ՅԵՆԿ

ԳԼԻՔ	Էջ
Ա . Եկեք հիմնենք Շահաբեր ընկերութիւն . . .	1
Բ . Հայաստանի լուսաւորութեան միջոցներ . . .	5
Գ . Խորհրդաւոր տեսիլ	8
Դ . Հայ երեխայից անուանակոչութիւն . . .	11
Ե . Մեռելի սուգ	22
Զ . Քահանայից և Ժողովրդոց փոխադարձ պար- տաւորութիւնք	27
Է . Հայրենական լեզուի և կրօնի իրաւունք . . .	33
Ը . Հայկազուն երկսեռ մանուկների հիմնական դաստիարակութիւն	37
Թ . Քաղցրանուագ երգոց ազդեցութիւն . . .	42
Ժ . Ըզգային կղերական դպրոցի կարեւորութիւն . .	46
ԺԱ . Բողոք մօրս մերոյ Հայաստանի	48
ԺԲ . Ըննպատակ, անշահ կտակ	51

ԳԼՈՒԽ Բ.

Եկե՛ք հե՛նէ՛ք շահաբեր ընկերութիւն

1. Մեր Հայաստանը տակաւին մանկական հասակի մէջ կը գտնվի, նորա համար դիւրամարս կերակուր հարկաւոր է. զի այժմ ի՞նչ կարող է գործել, ի՞նչ մշակութիւն ունի, ի՞նչ բերք ունի և ի՞նչ արուեստ՝ որ կարողանայ եւրոպայի նման գործարաններ ունենալ:

Եւրոպայ, որ այժմ մեքենայական արուեստներով և վաճառաշահութեամբ նիւթապէս զարգացած է, քանի՞ դարից 'ի վեր սկսած՝ կամաց կամաց հասած է կատարելութեան աստիճանի. բայց մեր թշուառ Հայաստան՝ տակաւին թլմութենից նոր ոտք ելած երեխայի նման, սկսած է քայլ առ քայլ դիմել դէպ 'ի լուսաւորութեան ասպարէզը. հազիւ հազ իմացաւ կրկին սեռերի համար ուսումնարանի կարեւորութիւնը, և հետեւաբար ապագայ սերունդերի համար բարեվիճակ կեանք պատրաստել:

2. Եւրոպայի զարգացման գլխաւոր պատճառն է զանազան կենցաղօգուտ ընկերութիւններ, որոնցով հիմնուած են արուեստների գործարաններ և ուրիշ բարեգործական ընկերութիւններ, և հետեւաբար ազգային հաստատութիւններ:

Ո՞ր է Հայաստանի մէջ մի այնպիսի ընկերութիւն, յիւրաւի ունի Հայաստան արգասաբեր հող, բայց ի՞նչ է մշակվում. ցորեան, գարի, հաճար և զանազան ընդեղէններ, որոնք մարդիկների և անասունների առօրեայ սննդեան միայն

կրկերաբերին . քննա օգուտ չունին Հայաստանի նիւթական կարօտութիւնները լցնելու , թէ և մասնաւոր տեղէր մշակում են բամբակ , և սնուցանում են շերամ , բայց ի՞նչ օգուտ ընդհանուր Հայաստանի , որ գնում են Եւրոպայի գործարաններ , և այն տեղից ապրանք դառնալով՝ գալիս են դարձեալ Հայերի վերայ ծախուելով՝ փողի հետ փոխուած գրնում է Եւրոպայ , որով և Հայեր մնում են դատարկաձեռն և նիւթական կարօտութեան մէջ :

3 . Սրբեմն Հայերի այժմեան վաճառականութիւնը (մասնաւոր թուրքաստանի) անօգուտ է Հայաստանի , և օգտաբեր Եւրոպայի , զի Հայերի վաճառականութիւնը ոչ այլ ինչ է՝ միայն Եւրոպայի ապրանքը ծախուելու միջնորդ իշխանութիւն նիւթական կարողութեան . . . Հայաստանի զի եթէ այս կերպով մի քանի տարի տեւէ՝ սնանկութեան հիւանդութիւնը (որ արդէն սկսած է) օր ըստ օրէ կ'ըջարակի ամէն երկիրներում , ուրեմն ի՞նչ դարման պէտք է այս նիւթական հիւանդութեան . ապա թէ ոչ եկէք հիմնենք Հայաստանի նիւթապէս կենդանութեան օգտակար ընկերութիւններ :

4 . Երբ որ տեսնում ենք մեծամեծ գետերն առատացընող սարերից և ձորերից վաղած փոքրիկ առուակների ջրերին , և ահագին ծովերի մէջ իջած գետերին , քաղցր մեղր շինող աշխատասէր մեղուներին , և աղնիւ մետաքս շինող քաջարուեստ շերամներին , և ձմեռուան համար պաշար պատրաստող փոքրիկ միջատ մրջիւններին՝ անտարակոյս մարդկային բնութեան վերայ կըտիրէ մի ընկերասիրութեան քաղձանք . ըստ որում մարդ ևս ստեղծուած է ընկերական վիճակում , ուրեմն պէտք է աշխատէ , շահուի , ապրի և աշխարհումս կեանք վարէ ընկերութեան մէջ . զի ահա տեսնում ենք Եւրոպայի մէջ թէ ի՞նչ քան զթուարին գործեր առաջ են գնում ընկերութեամբ , որ մի ամենահարուստ մարդ չէ կարողացել անգամ սկսելու :

5 . Եւրոպայի եկէք հիմնենք մենք ևս “ Ե Ա Հ Ա Ր Ե Ր ” անունով մի ընկերութիւն յօգուտ Հայաստանի նիւթապէս յառաջադիմութեան : Ըստ քեր ընկերութեան կարող են մասնակցիլ թէ աղքատ , թէ քաղաքացի և թէ շինական , թէ վաճառական և թէ արհեստաւոր . որ և իցէ աշխատութիւն ունեցող , որ կարողանայ հինգ տարի շարունակ ամիս մի բոլորիլ ընկերութեան բաժանորդ գրուելու . և ամէն ամիս շարունակ վճարելու . մի մարդ՝ որ իւր անձնական ծախսերի օրական չորս կոպէկ խնայութեամբ յետ դցէ՝ ամիս մի բոլորիլ իցէ կաւելանայ . և այս ընկերութիւնը ամենայն կեդրոնական քաղաքների մէջ կարելի է հիմնուել զանազան կանոնների ենթարկուած :

6 . Ըստ քեր ընկերութեան անդամների թիւը 1000 մարդից աւելի կարելի է որ լինի . որոնք զաղտնի քուէարկութեամբ ընտրեն իւրեանց միջից 25 թուով բանիբուն , հաւատարիւ , խղճմտանքաւոր և հասարակաց օգտին կամ ընկերութեան շահերին աշխատող ճշմարտասէր անձներ “ Գ Ո Ր Ծ Ա Ա Ե Տ Ա Ր Ժ Ո Ղ Ո Վ ” անուն , որոնք ընտրեն իւրեանց միջից դարձեալ քուէարկութեամբ մի ատենապետ , մի հաշուակալ , մի գանձապետ և սոցա օգնականներ : Այս ժողովի ձեռնին կըլինի ընկերութեան կառավարութեան սանձը , և բոլոր ելլամական հաշիւը , որ տարէ ցտարի մի կերպով հաղորդէ ընկերութեան բոլոր անդամներին , և հինգ տարիից յետոյ ազգային մի օրագրի միջոցով :

7 . Գործակատար ժողովը առաջին տարուան ընկերութեան եկամուտով վարձէ արգասաւոր հողեր , որոնց մէջ մշակել տայ բամբակ , տորոն , ճակնդեղ , բրինձ ևն . երկրորդ տարուան արգինքով շինել տայ մասնաւոր առնուած տեղերում անասուն դարմանելու յարկեր , որոնց մէջ լեցնէ քաղմաթիւ ոչխար , կով , խոզ , եղ , հաւ և այլն . և նոցա ամենի վերայ ընկերութեան անդամներից վարձքով բռնուած հովիւներ և պահապաններ դնէ . երրորդ տարում այս երկու

տեղի արդիւնքներն ուղարկէ հեռաւոր քաղաքներում ծախել տայ, և փողէրը հալածւած պահէ ընկերութեան ապագայ օգտի համար. ընկերութեան ամէն մի անդամ, որ և իցէ գործերի ըստ յարմարութեան, պաշտօնակատար է և միանգամայն տէր, օրինակ՝ մի հովիւ կ'համարուի վարձկան միանգամայն և ոչխարների տէր, նմանապէս և միւս պաշտօնատէրեր. ահաւասիկ Հայաստանի հարստութեան առաջին աղբիւրը: Չորրորդ տարում առնէ մի ընդարձակ այգի. և տնկել տայ բազմաթիւ թփերի ապագայ տարիների շերամ անուցանելու համար: Հինգերորդ տարում բաւական հարստացած է արդէն Շահաբեր ընկերութիւնը, այն ժամանակ շինել կտայ կտակեղէնների գործարան, եւրոպայից բերել տայ գործարանի համար մեքենաներ և գործաւորներ և մի արուեստագէտ, ուր կարող են սովորել հարկաւոր արուեստներ Հայազգի ուշիմ պատանիներ յօգուտ ընկերութեան: Եւ այնուհետեւ Շահաբեր ընկերութիւնը տարէ ց'տարի կ'ըյառաջադիմէ դէպ 'ի հարստութիւն յօգուտ ազատութեան այժմեան նիւթապէս դժբաղդ վիճակից:

8. Եկէք հիմենք. բայց ի՞նչ տեղ, ուր որ ունի կարելութիւն, ուր որ կան Հայաստանի բեղմնաւոր հողեր, ուր որ վաճառականութիւնը վտանգաւոր վիճակում կ'գտնուի, ուր որ տիրում է ընդհանրապէս շռայլութիւն, և զեղքութիւն, ուր որ կ'ցանկան մի այսպիսի կենցաղօգուտ ընկերութեան:

Սրեմն եկէք հիմենք:

Գ. ԼՈՒԻՍ Բ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՄԻ ԶՈՅՆԵՐ:

Հայաստանի լոսաւորութեան համար՝ օտեւել զառիւթեր զէրօք էն:

1. Ելլէն լոսաւոր գաղափար ունեցող աղջային՝ նկատելով եւրոպացւոց օրէ ցօր թէ նիւթապէս և թէ բարոյապէս զարգացումը և Հայաստանի այժմեան անտարբեր վիճակը, հետեւեալ կերպով կրխօսին իրարու. « Ե՛ղբայր, Հայաստանի լոսաւորութեան համար՝ ուսեալ զաւակներ պէտք են » ուրեմն հետեւեցնում են) նախ՝ Եկեղեցւոյ ընտիր և գործունեայ ժառանգաւոր հասցնելու համար՝ ամէն նիւթական կարողութիւն ունեցող վանքերի մէջ հաստատուին կղերանոց կամ ընծայարան, տպարան, և ընթերցարան. այս օրինակը ահա գործնականապէս ցոյց տուին մեր վեհափառ Հայրապետ Գէորգ Գ. սրբաղնազոյն. Կաթողիկոսն, և սուրբ երուսաղէմաց արժանընտիր Պատրիարք Եսայի Սրբաղան Արքեպիսկոպոսն. օրոնք ընդհանուր ազգի յոյսը պատկելու, և մեր նախնի մեծագործ սուրբ հարց զօվիլի գործոց նորոգիչ համարուելու արժանաւորութիւնն ունեցան. երանելի թէ միւս երեւելի վանքերն էլ նոցա աղիւլ օրինակին հետեւելու պատիւն ունենալին (թէ և նորնցից ոմանք սկսեցին՝ բայց հազիւ թէ Յօնանու զգմենու չափ կեանք ունեցան). տարակոյս չկայ որ այնպիսի վանքերից դուրս դան 'ի ժմնկին ուսեալ՝ բարեկիրթ և գործունեայ եկեղեցական հովիւներ, և դպրոցական ուսուցիչներ, զի Հայաստանի այժմեան « հունձք բազում են և մշակք սակաւ »:

2. Բայց ժողովուրդ (ասումն) ուսումնասիրութեան և

բարոյականութեան վարժեցնելու համար՝ հաստատուին ամէն քաղաքների մէջը հասարակաց ընթերցարաններ և թատերական հանդիսարաններ, ընթերցարանների մէջ գտնուին զանազան տեսակ ազգային հին և նոր գրքեր, պարբերական թերթեր և ամէն տեսակ լրագրեր. ուր անխտիր կերպով ամէն մարդ արտօնութիւն ունենայ պարապոյ ժամերը այնպիսի հաստատութեանց մէջ անց կացնել. իսկ թատերական բեմերի վերայ կը տեսնայ ժողովուրդը կրթական զուարճալի ներկայ ուսումներ, կը լսէ գործնական քարոզներ, որոնցից բաւական օգուտներ կը քաղէ. զի բարոյականութեան մէջ կը կրթուի և ազգասիրական ոգևով կը վառուի. և այս միջոցներով ազգը կը յառաջագնէ դէպի լուսաւորութիւն, ինչպէս որ Եւրոպացիք ընթերցասիրութեամբ ստացած են :

3. Շափահաս տղայոց համար էլ (ասում են) հարկաւոր են գիշերօթիկ և կիւրակնօրեայ դպրոցներ, որոնք հեռացած իւրեանց ծնողաց փաղաքշանքից և վատ գայթակղեցուցիչ օրինակներից՝ ամէն ուսմանց առարկաների վրայ ուշադրութիւն դարձնելով՝ կարող են սուղ ժամանակի մէջ սովորելու և բարոյականութեան մէջ կատարելապէս կրթուիլ. նմանապէս և կիւրակէի դպրոցներում կարող են յաճախել կիրակի օրեր, արհեստի գնացող չափահաս խառնակներ, փոխանակ անօգուտ խաղերի հետ պարապելու՝ գնան այնպիսի դպրոցներ, իրանց թերի թողած ուսմունքը կատարելագործելու. իսկ հասարակ ուսումնարանաց և դպրոցաց համար էլ (ասում են) արդէն բացուածները րարեկարգել նոր լուսաւոր մեթոտներով, և չեղած տեղերումն էլ բնաւ արդիւնաւոր դպրոցներ, և կառավարել ազգային նպաստներով կամ աղբիւրներով :

4. Ուրեմն մնայ մեզ խօսիլ Հայաստանի հիմնական լուսաւորութեան միջոցի վերայ. այսինքն՝ պատրաստել ապագայի համար ուսեալ և բարեկիրթ սերունդ. Ապա պէտք է ուսեալ և բարեկիրթ մայրեր ունենալ, և հետեւապէս պա-

հանջել և ուսեալ սերունդ. ուրեմն Հայաստանի (այսինքն Հայ գտնուած) ամէն քաղաքների և գիւղերի արական սեռի դպրոցների հաւասար՝ հարկաւոր է ունենալ և իզական սեռի բարեկարգ դպրոցներ, որոնց մէջ ամէն ուսմունքներից փոքր ՚ի շատէ ուսեալ Օրիորդները քանի տարիից յետոյ՝ պիտի նոր սերունդների նախադաստիարակ մայրեր լինին :

5. Մի նոր լեզու բացուած մանուկ, երբ սկսած է հասակով օրէ ցօր զարգանալ, նր համար մարմնական մշտնադան հետ կարեւոր է և հոգեկան սնունդ. նախ՝ կը ցանկայ իմանալ իւր և աշխարհի արարածոց ստեղծող և կառավարողը, Եկեղեցին և նորա սուրբ խորհուրդները, Արեգական, Լուսնի, աստղաց և երկնքի ինչութիւնը. անձրեւի, ձիւնի, կարկտի, երկրաշարժի, ծիածանի, կայծակի, սրոտումի, ամպերի և տարուան չորս եղանակաց պատճառները. աշխարհի միջի գտնուած ծովերի, լեռների և քաղաքների անունները, և նորա բնակչաց թիւը, կենդանեաց տեսակները և նոցա բնաւորութիւնները, ծառերի, ծաղիկների և խոտերի աճեցումը. հանքային նիւթոց յատկութիւնները. լսել հարկաւոր օգտակար և զուարճալի պատմութիւններ, սովորիլ փոքր ՚ի շատէ կարդալ և գրել, և մանր մունր թուահաշիւներ, վերջապէս մի նոր մտաւորական ախորժակ կուսնայ՝ նոր բաներ խորհիլ, խօսիլ, լսել և գործել առանց չարը բարիից որոշելու :

6. Ուրեմն այնպիսի դեռահասակ մանուկների դաղափարը լուսաւորելու համար՝ հարկաւոր է ունենալ ճշմարիտ ուղղափառ կրօնի սկզբունք, բնական և քաղաքական աշխարհագրութեան, բնադիտութեան գիտելեաց, թուաբանութեան հաշիւների և բարոյականութեան կանոններին փոքր ՚ի շատէ տեղեակ և կրթուած մայրեր, որոնց խնամոց ենթարկուած փոքրիկ մանուկներ արդէն նախակրթուած և ճշմարիտ դաստիարակութեամբ զարգացած՝ մի ժամանակից յետոյ մտնում են Ուսումնարան, այնուհետեւ սկսում են

ինքնայոժար սիրով և շատ դիւրին կերպով, և մանաւանդ
կարճ միջոցումը սովորել կարեւոր ուսմունքներ, և ընել հայ-
րենեաց համար օգտակար անդամ. զի այն կերպով կրթուած
մանուկների համար ունակութիւն եղած է մարմնական ար-
նդեան հետեւ հոգեկան անուն: Ահա այս միջոցն է, որ ի-
գործ դրած են թէ եւրոպացիք և թէ Ամերիկացիք, որով
և այժմ զարգացած են թէ նիւթական և թէ բարոյական
յառաջադիմութիւններով: Ուրեմն նոցա օրինակին հետեւե-
լու և զարգացման աստիճանին հասնելու՝ պատրաստենք ու-
նեալ մայրեր, որով և ունենանք ուսեալ սերունդներ Հայ-
աստանի լուսաւորութեան համար:

Գ. Լ. ՈՒԽ Գ.

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՏԵՍԻԼ

Երբ մի օր նստած ես կ'երազէի
Աշխարհիս ունայն փառքերի վերայ,
Ըփոտուած մտքով կ'ընթափառէի,
Ի քուն ընկղմած մի երազ տեսայ,
Տեսայ մարդիկներ ՚ի խոր քուն թմրած,
Անկարգ անսահման իրարու վերայ,
Սոսկալի խաւար զերեմք պաշարած,
Ոչ արեւ, չլուսին և ոչ լոյս տեսայ:
Տեսայ երկնքից մի լոյս ծագեցաւ,
Թմրած մարդիկներ վերկացան տեղից,
Ազլամուղջ խաւար շուտ փարատեցաւ,
Տխուր տեսարան վանեցաւ լուսնից:

Հեռուից մի մեծ ջահ էր երևում,
Որոյ անաղտ լուսից զօրացան,
Նոր ոգի առած թմրած տեղերում,
Ելան որ գնան տարակուսեցան:
Չիմացան ինչպէս դէպ ուր ընթանալ,
Զի երկու երկար ճանապարհ տեսին,
Բաւական միջոց սկսան խոկալ,
Ուստի շուարած մի տեղ կանգառին:
Յանկարծ հնչեցաւ մի քաղցրիկ բարբառ
« Թէ այս է նեղ դուռն ճանապարհ անձուկ,
Որ տանի ՚ի կեանս անպատում անճառ,
Եկայք անյապաղ առ իս մատերուք »:
Կրկնեցաւ դարձեալ մի ուրիշ պատգամ
« Լայն է ճանապարհ և դուռն ընդարձակ,
Որ տանի կորուստ մշտնջենական »:
Արդ ո՞վ կամիցի՝ մոցէ համարձակ »:
Օ՛ր նեղ ճանապարհս էր շատ դժուարին,
Քարուտ ու փշոտ, սար ու ձորերից,
Համբերող անձինք գնալ յանձն առին,
Զրկուած աշխարհի ունայն փառքերից:
Նորքա ընտրեցին այն նեղ ճանապարհ,
Ուր էր նեղութիւնք և խիստ տառապանք,
Յանձն առին յօժար մինչ ՚ի մահ գնալ,
Իսպառ մերժեցին աշխարհի սուտ փառք:
Իսկ լայն ճանապարհս էր նախանձելի,
Հոտաւէտ ծաղկունք յաջ յահեակ բուսեալ,
Հեշտասէր մարդկանց էր շատ հաճելի,
Ոմանք պատրաստուած ընտրեցին գնալ:
Տեսան զուարճութիւն լայն ճանապարհին,
Հեշտալի խախճանք քեկրանաց հրճուանք.
Սրտագրաւ դիմաց սիրուհեաց սեռին,
Հոտաւէտ բուրմունք ծաղկանց բուրաստանք:
Երկճանապարհաց միջին կայր խրամ,
Մարդակուլ անդունդ՝ վիհ մեծ կենսազրաւ,

Մի քանի տեղ կայր կամուրջ պնդակազմ,
Անցուդարձ մարդկանց ինքնիշխան կամաւ ։
Հուսկ յետոյ տեսայ վառեցին ջահեր .
Մեծ ջահի լուսից փառաւոր անձինք
Առաջնորդեցին մարդկանց անվեհեր ,
Որոնք ունէին յուս բարձած բռնիք ։
Երթեցան ամէնքը տեղից վերկացած ,
Սկսան գնալ ջահերի լուսով ,
Ոմանք ընթացան նեղ դռնից մտած ,
Ոմանք գնացին լայն ճանապարհով ։
Երբ անձուկ դռնից որոնք որ մտան՝
Սիրով յանձն առին շարունակ գնալ .
Հասին վերջապէս 'ի վայր հանգստեան ,
Անդ վիճակեցան անվախճան մնալ ։
Երեցին մի ձայն հրաւիրական ,
Թէ « եկայք առիս ո՛վ ծանրաբռնիք ,
Եկայք դուք օրհնեալք հօր իմ սիրական ,
Եւ ժառանգեցէք սուրբ փառաց տեղիք » ։
Ոմանք ընդարձակ դռնից անցկացան ,
Լայն ճանապարհի հեշտութեանց խաբուած ,
Ի կորուստ անվերջ յաւիտեանական ,
Մատենեցան 'ի հուր իսկ դատապարտուած ։
Օ՛ր գոռաց իսկոյն ձայն զարհուրական ,
Թէ « երթայք յինէն յիմար անիծեալք
Ի գեհեան 'ի հուրն յաւիտեանական ,
Որք այժմ իրաւամբ դուք դատապարտեալք » ։
Եւս տեսիլ զիս շատ զարհուրեցրուց ,
Երկիւղեցս իսկոյն զարթնեցայ քնիցս ,
Յետոյ յիշեցի այս խօսքը վաղուց ,
Ուրեմն ընդունայն է փառք աշխարհիս ։

ጥ. 1, 11 ከ 16 ጥ.

ՀԱՅ ԵՐԵՒԱՅԻՑ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Հայհայտն անուն ընել պէտք է ըր աշտի երեխաներէն :

Մեր ազգի օտարամոլ սովորութիւնը՝ իբր քաղաքա-
կրթութիւն համարուած է իրան մէջը . վասն զի ինչ ազգի
մէջ որ ընակի, կ'ջանայ նոյն ազգի բոլոր սովորութեանց
նմանող լինել թէ՛ լեզուով՝ թէ՛ բարքով՝ թէ՛ հագուստով
թէ անունով և թէ որեւիցէ շարժմանց . թէպէտ ներելի է
ամէն մի սովորութեանց հետեւող լինել, բայց չի՛ ներուիլ այն
բանին՝ որն որ թէ՛ աղգութեան և թէ՛ կրօնին անպատուութիւն
կ'ըբերէ . զորօրինակ . երեխաների անուանակոչու-
թեանց մասին, զի փոխանակ սրբոց և նախնի Հայ անուանց՝
մուրանալով այլոց ազգաց անուններ (իբր պապերից մնա-
ցած մի աղնուական անուն)՝ իժամ մկրտուէ դնում են իրանց
երեխաների վերայ՝ ՚ի նախատինս մեր աղնիւ Աղգութեան և
կրօնին, ինչպէս Վրաստանի և Թուրքաստանի Հայ ազգի բը-
նակչաց անտեղի և վատ սովորութիւնը . զի Վրաստանի Հա-
յոց արական սեռին անուանում են Նիգօլի, Վաօլ, Իվան,
Արտեմ, Ժէնի ևն . իսկ իգական սեռին՝ Մաշինկայ, Բարբա-
րէ, Սալամէ, Գէնի ևն ևն . և Թուրքաստանի Հայոց արա-
կան սեռին անուանում են Միրզէ, Ալահվերտի, Խուտի,
Շահպաղ, Հեմզէ, Պէտէլ, Ճիհանկիր, Խօջամիր, Եու-
սուֆ, Եաղուպ, Ապտալ, Մուսայ, Թահար ևն . և իգական
սեռին՝ Ալթուն, Սուլթան, Սօնայ, Ճաւահիր, Չիչէք, Պա-
հար, Էսմէր ևն . (թէ և ոմանք անարատ պահում են թէ

աղգային և թէ կրօնական աղնիւ անուաներ, և դնում են ի-
րանց զաւակաց վրայ 'ի պարծանս Հայ Ազգութեան և մա-
քուր կրօնին) :

Եւս վերոյիշեալ անտեղի սովորութեան դէմն առնելու
համար, մեր Ազգայնոց մէջ բաւական ժամանակից 'ի վեր' մի
բարենախանձ խնդիր կըսողուի, թէ՛ « Հայկական անուն
դնել պէտք է մեր Ազգի երեխաներին » . ուրեմն այս կարեւոր
խնդիրը 'ի գործ դնելու համար ի՞նչ միջոց պէտք է :

Եւս Մկրտիչ Քահանայք 'ի պաշտօնէ հարկադրու-
ած՝ առանց ծնողաց առաջարկութեան զիջանելու, հե-
տեւեալ հանելուկների ներքեւ դրուած թէ՛ արական՝ և թէ՛
իգական անուններից ըստ պատշաճին և ծնողաց հաւանու-
թեամբ՝ ընտրեն մի յարմար անուն՝ և դնեն մկրտուող երե-
խայի վերայ, որով որոշուին Հայ մանուկներ՝ այլոց աղգաց
մանուկներիցը :

Եւս կրօնք՝ հանելուկները գրեն մի թղթի վրայ, և ու-
սումնարանի մէջը պարագայ ժամերումը յանձնեն մի վիճա-
կով ընտրուած աշակերտի, որ առաջարկէ մի հանելուկ
միւս ընկերին . ուլ որ կարողանայ լուծել՝ իրաւունք ունենայ
նոյն հանելուկների թուղթը ինքն ստանալու և ուրիշներին
առաջարկելու . իսկ աղգասէր ուսուցիչը ներկայ գտնուելով՝
հանելուկ լուծող աշակերտին բացատրէ անուանատիրոջ
պատմութիւնը :

Եւս այս միջոցներով հայկական անուանց համարումը
կ'աւելանայ, կը լինի Ազգի մէջ հասարակ սովորութիւն ա-
պագայ սերնդոց այնպիսի անուններ դնելու . իսկ աշակերտաց
մտքերը կը զարգանան տեղեակ լինելով նախնի զիջազանց
պատմութեան . թէպէտ մեր աղգային պատմութեան մէջ
շատ աղնիւ անուններ կան (զորօրինակ արական սեռի . Թոր-
գոմ, Գեղամ, Սիսակ, Հայկակ, Հարմայ, Արայ, Անուշաւան,
Պարէտ, Զարմայր, Նորայր, Հրաչեայ, Շաւարշ, Երուանդ,
Վահագն, Վահէ, Արշամ, Վաղարշ, Խօսրով, Վռամշապուհ,
Արտաշէր, Վարազդատ, Վարդ, Կիրսեհ, Գիսակ, Սուրէն,
Արամ, Խորէն, Համաղասպ, Տաճատ, Գուրգէն, Հմայեակ,

Առանձար, Արտակ, Եղիշէ, Եղնակ, Մամբրէ, Կորիւն,
Թաթուլ, Փառնակէս, Գազիկ, Թորոս, Հեթում, Քաջաջ,
Օշին եւ . և իգական սեռի՝ Եւայ, Անոյշ, Հայկանոյշ, Սըմ-
բատուհի, Երանակ, Արտաշաման, Զապէլ, Սահականոյշ
եւ .) բայց մենք աւելի նշանաւոր անձանց հանելուկներ ընտ-
րեցինք պատմական կարգաւ (բացառուք իգական անուանց) :

- (1). Հայոց ազգի մեծ նահապետ,
Գեղապատշաճ վեհ կորովին,
Իւր անխոտոր թափանց նետով
Գցեց յերկիր մեծ գոռողին :

(Հայկ ' Խոհապետ ' որ աղանջ Բելին) :

- (2). Երի և քաջ իւր հօր նման,
Եւ բարեսիրտ առաքինի
Եղբարք թողուց 'ի Հարք գաւառ,
Ինքն յարարատ գայ բնակի :

(Արեւիկ ' Հայկայ որդին) :

- (3). Եղնիւ սերունդ զիւցաղնական,
Սեպուհ տիրող իւր ազգի մէջ,
Իւր անունով քաղաք շինեց,
Արարատայ մեծ գաշտի մէջ :

(Արմայիտ ' որ շինեց Արմա-իւր քաղաք) :

- (4). Հայրենասէր անպարտելի,
Եւ հաւածող իւր թշնամեաց,
Յաղթեց վանեց, և սպանեց,
Նոցա զօրքի գլխաւորաց :

(Արմ ' որ աղանջ Երեւոյն տղադէ Էջնաներէն) :

(17). Սուրբ Հայրապետ՝ եկեղեցւոյ
ընտիր հովիւ արժանաւոր,
Որոյ խստիւ նահատակեց,
Հայոց Տիգրան վատ թագաւոր:
(Ս. Յոսէփ՝ վարդապետ Գրիգոր):

(18). Լիւրճան աղբի ընտիր հովիւ,
Սուրբ Նահատակ արթուն անուամբ,
Մանկահասակ կաթողիկոս,
Լի կատարեալ իմաստութեամբ:
(Ս. Գրիգորի՝ Աղբապետ Կաթողիկոս):

(19). Հայաստանի ճրագ լուսատու,
Սուրբ Հովնաթան արժանազօղ,
Խմեց բաժակ թիւնով լցուած,
Թագաւորի անդուծ ձեռքով:
(Ս. Ներսէս՝ Հայրապետ Կոնստանտին):

(20). Պարթևական Սուրբ Հայրապետ
Ընդդիմացաւ Հայ իշխանաց,
Որոնք եղան պատճառ անկման
Իշխանութեան Արշակունեաց:
(Ս. Իսահակ՝ Թագապետ Կոնստանտին):

(21). Հայոց աղբի մեծ բարերար,
Եղաւ երրորդ լուսաւորիչ,
Գտաւ աղբին Հայերէն գիր,
Եւ կոչեցաւ Սուրբ թարգմանիչ:
(Ս. Մեթոդիոս՝ վարդապետ Կոնստանտին):

(22). Վրիստոսական սուրբ օրինաց,
Վրէժխնդիր էր բոլորեքուած,
Դէմ կանգնեցաւ ահաբեկութեամբ
Պարսից Մոզուց և Մոզպետաց:
(Ս. Վրէժխնդր՝ Երեմիայի):

(23). Պարսից Յաղկերտ արքային դէմ
Ճշմարտութիւն ծածկել չուզէց,
Յիսուս Փրկչի սուրբ Յարութիւն
Ազատ կերպով նա քարոզեց:
(Գրիգորի՝ Դիմապետ Կոնստանտին):

(24). Պարսից անթիւ զօրաց ընդդէմ
Պատերազմող քաջ զօրավար,
Ճակատամարտ հանդիսի մէջ
Ընկերներով ՚ի յԱւարայր:
(Ս. Վարդան՝ Պարսից Կոնստանտին):

(25). Կամարական աղբի սերունդ
Հետի կռուէր սուրբ ձեռին,
Երբ խրուեցաւ ձին տղմի մէջ,
Ի վարդանանց պատերազմին:
(Արշակունի՝ Կոնստանտին):

(26). Լարայրի պատերազմին,
Մեծ վարդանայ քաջ Մարտակից,
Ընձայացի իշխան ընտիր,
Եղաւ մահուան հաղորդակից:
(Արշակունի՝ Կոնստանտին):

(27). Մամիկոնեան քաջ զօրավար
Անպարտելի Պարսից զօրաց
Սակաւաթիւ զօրքով յաղթեց,
Եւ ինքն այնպէս անյաղթ մնաց:
(Վարդան՝ Մամիկոնեան Պարսից Կոնստանտին):

(28). Տարօն երկրի անյաղթ իշխան
Զարհուրեցոյց Պարսից աղբին,
Նոցա անթիւ զօրաց յաղթեց,
Տիրեց ազատ իւր նահանգին:
(Մարտիրոս՝ Կոնստանտին):

1166
39



- (29) . Հռչակաւոր մեծ քաղաքին
Քաջ թագաւոր և ողորմած ,
Միշտ աղքատներ կանչէր իւր հետ ,
Կերակուրի սեղան նստած :

(Աշո Դուրմաշ անուն թագաւոր Բագրատունեաց) :

- (30) . Բազրատունեաց ընտիր զարմից
Քաջ թագաւոր սուրբ նահատակ ,
Չար ոստիկան Յուսիֆայ ձեռքով ,
Կը չարչարուի բաղմատեսակ :

(Սբէր Խոսրովնու Ս . Նահապետ Բագաւոր) :

- (31) . Հայոց չորրորդ իշխանութեան
Եղաւ կանգնող աղնիւ իշխան .
Հայոց երկրին Կիլիկիոյ
Տիրեց աղատ համանգամայն :

(Ռոմէն՝ հեռաւոր Ռոմէնեան իշխանութեան) :

- (32) . Ռուբենեանց տան վերջին ճրագ ,
Թագակորոյս աղնիւ իշխան ,
Հալածական մինչ 'ի Փարիզ
Գնայ՝ և անդ առնու վախճան :

(Լեւոն՝ Վերջին թագաւոր Ռոմէնեանց) :

Ի Գ Ա Կ Ա Ն Ա Ն Ո Ւ Ա Ն Ք

- (1) . Մեր սուրբ փրկչի Մայր անարատ ,
Արեւելից մեծ արուսեակ ,
Նաւ շահաբեր ծառ պտղատու ,
Կանանց սեռին եղաւ պարծանք :

(Ս . Մարիամ Աստածածին) :

- (2) . Ընդ և ծեր կին պառաւած
Ծնաւ բերաւ մի սուրբ որդի ,
Արժանացաւ կոչուել նա մայր
Կարապետի Տեառն Յիսուսի :

(Եղեմէն՝ Ս . Յովհաննէս Մկրտչի հայրը) :

- (3) . Կենաց փայտին 'ի զիւտ գնաց
Յերուսաղէմ 'ի սուրբ քաղաք .
Գտաւ հանից սուրբ գանձն անգին ,
Որ հաւատոյ եղաւ պարծանք :

(Հեղինէ՝ Ս . Թագոհէն) :

- (4) . Ըշխարհակուլ ջրհեղեղից
Երբ աղատուած տապան նստաւ ,
Էր ամուսին արգար 'նոյի ,
Եւ 'ի Մարանդ նա թաղուեցաւ :

('Նոյեմբ' հին 'Նոյ Նահապետ) :

- (5) . Հայոց նախկին լուսաւորչի
Սուրբ կոյս ընտիր աշկերտուհի ,
Իւր հօր ձեռքով անխնայաբար ,
Ի սէր փրկչին նահատակի :

(Ս . Ստեփանոս Ստեփանոսի Բագաւոր զմեռն) :

- (6) . Յարեւելց անդին մի գանձ
Հայաստանի նուիրեցաւ ,
Որով մեր աղգը խաւար կռոց
Պաշտելութեանց աղատեցաւ :
(Ս . Հռէփեմէ կոյս Նահապետ) :
- (7) . Հոգեւոր մայր սուրբ Հռիփսիմեայ ,
Եւ Մայրապետ սուրբ Կուսանաց ,
Նուէր և զոհ Հայաստանի ,
Արժանացաւ երկնից փառաց ,
(Ս . Գոյեմէմէ Գէորգի կոյս Նահապետ) :
- (8) . Սուրբ կոյս ընտիր և ճգնաւոր
Սեպուհ լեառն յայրն բնակի ,
Շատ ժամանակ մնալուց յիտոյ՝
Բարի մահաւամբ կը վախճանի :
(Ս . Մանէ կոյս՝ Ընէր Հռէփեմէ-ն) :
- (9) . Սրաց աղգի լուսաւորիչ ,
Երջս Առաքեալ և Նահատակ ,
Ընկեր գոլով Հռիփսիմեանց ,
Եւ էր վարուքն մարմնով հրեշտակ :
(Ս . Նուէր կոյս՝ Արքայմէ Առաքել-ն) :
- (10) . Սուրբ վարդանայ կոյս օրիորդ
Եղաւ Սրաց մեծ թագուհի ,
Որոյ վաղղէն իւր ամուսին
Նահատակեց առանց սուրի ,
(Ս . Շահան կոյս Շահան) :
- (11) . Պարթեաղանց անյաղթելի ,
Մեծ Տրդատայ ազնիւ տիկին ,
Եր բարեպաշտ ջերմ հաւատով
Հայաստանի մեծ թագուհին :
Աշխէն՝ կէն Տրդատ Բ-դարեմ) :

- (12) . Քաջ Տրդատայ քոյր Նազելի ,
Արքայաղարմ վեհանձնական ,
Հայաստանի դիւցազնուհի ,
Համեստ վարուք հաճոյական :
(Խորովեդու-իս Խորով Բագարե աշխէն) :
- (13) . Քաջ Տիգրանայ անձնանուէր ,
Հաւատարիմ ճշմարտութիւն ,
Աթաղահայ դաւադրութիւն
Գրեց եղբօրն միանգամայն :
(Տեգրան-հէ Գրե Տեգրան Ա . Բագարե) :
- (14) . Տիգրան Հայոց թագաւորի
Եր թագուհի ազնիւ տիկին ,
Որոյ եղաւ հաւատարիմ ,
Ժրագլուխ սպակ անդին :
(Զար-հէ կէն Տեգրան Ա . Բագարե) :
- (15) . Բլան աղգի դուստր Ճարտար ,
Եղաւ Հայոց մեծ թագուհի ,
Տիկին ազնիւ Արշակունեաց
Քաջ Արտաշէս թագաւորի :
(Սաւեմէն կէն Արտաշէս Բ . Բագարե) :
- (16) . Բրշակ երկրորդ թագաւորի
Հայաստանի մեծ թագուհին ,
Դուստր չքնաղ իւր հայրենեաց ,
Պայծառ ազնիւ գոհար անդին :
(Փառաշէն Գր եղաւ կէն Արշակ) :

Գ 1. ՈՒ Խ Խ

Մ Ե Ռ Ե Լ Ի Ս ՈՒ Գ:

“Ո՛ւ է պարս Գրեհանէնց առ-գ ասու-
'ն վերայ Կեւելոյ, այլ լացցեն շրէպք, և
հօծեցցեն Բերհա-ապք” : (Մաշա .) :

Անցեալ օրին իբր լուսաւորեալ մտերիմ բարեկամս մէ-
կը հանդիպեցաւ ինձ, յանկարծ սկսեց խօսիլ ինձ հետ վի-
ճաբանական ձևով : — Հայր, ներեցէք ինձ ասել ձեզ, որ
նախկին հեթանոսական յիշատակները սկսել են նորոգուիլ
մեր աղբի եկեղեցւոյ մէջը : — Ես էլ զարմացմամբ հարցու-
ցի. ի՞նչ սովորութիւն է, որ ինձ յայտնի չէ :

— Ի՞նչպէս թէ յայտնի չէ, չէք տեսնում մեր Հայոց
կանայք ամէն երկրում ի՞նչ զգուշ թեմարան են ձեռքը-
նում մեռելի վրայ, և քանի դեղերում տեսել եմ որ՝ տղայ-
մարդիկն էլ նոցա ձայնակից են լինում, ինձ այնպէս է երե-
ւում՝ որ ձեր Թոյլութեան իցէ՛ այսչափ անպատճառ կեր-
պով յուսահատաբար ողբալ մեռելի վրայ :

— Սիրելի, մեղադրութեան շատ արժանի չէն, (1) որ
ծնողական կամ որդեական սրտի կսկիծն է՝ որ այնպէս Թոյլա-
տըրում է (2) . ուսմունքից և եկեղեցական կանոններից ան-
տեղեակ են : — Բայց դուք էք կարդում տղայի Թաղման
եօթնօրեայ կարգի աղօթքումը “ ո՛չ է պարտ քրիստոնէից
սուգ առնուլ ՚ի վերայ մեռելոց , այլ լացցեն շրէպք , և կու-
ծեսցին Թերահաւատք , զի նոքա են արժանի կոծոց և ող-
բոց : Այլ դուք միթէ արեցարուք միւսանգամ կենդանու-
թեամբ ամենայն ընտրելոց ՚ի քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր , -
ուրեմն այն ի՞նչ անկարգութիւն է որ լինում է . տակաւին Ս .

Պատարագը չը վերջացած , սկսում են գոռալ , ողբալ որե-
կիցէ մեռելի վրայ . ուրեմն ժամերգութիւն Թող խափանուի ,
աղօթքի ձայներ կըտրուին՝ ապա կանայք Թող գոռան “ վայ
ափի , վայ նանի , ատա , ատա , պալայ , պա՛ճի , Լա Լա . բայց
գիտէ՞ք որ շատերին էլ արտասուք չի Թափել , մի միայն ի-
րանցից խօսքեր են շինում և անամօթաբար ժողովրդոց բազ-
մութեան մէջը Պարսից եղանակով պայաթու նման երգում
են : — Սիրելի , նախնեաց այդպիսի անկարգ սովորութիւններ
մէկէն ՚ի մէկ խափանելը շատ դժուարին գործ է , մեզ էլ
յայտնի է որ նոյն միջոցումը մինչև անգամ մեռելի վրայ
կարգ կատարող քահանայի ձայնը խեղդվում է լացող կա-
նանց գոռումներիցը , և չ'իմացվում թէ քահանայն ի՞նչ է
կարդում , գի՛րք , աւետարանն թէ աղօթք : — Բայց գիտէ՞ք ,
որ շատ կանայք միւսնոյն մեռելի վրայ իրենց մեռելների անու-
նով լաց են լինում :

— Եւ , մի բան ընկաւ միտս . անցեալ տարիներումը մի
գեղի մէջ գտնուեցայ . աւագ ուրբաթ գիշեր գեղի իշխանք
աղաչեցին հետս գտնուող վարդապետին՝ որ Յիսուսի չարչա-
րանաց կտակը կարդայ , բայց նա աւելի հասկացնելու հա-
մար՝ աշխարհաբար լեղւով՝ սրտառուչ կերպով խօսեցաւ
ըստ բաւականին . մինչ սկսեց խօսիլ , յանկարծ կանանց կող-
մից մի գոռալու ձայնէր բարձրացաւ , իսկ վարդապետը՝ մեր
Փրկչի մահուան յիշատակը կարծելով՝ աւելի եռանդոտ կեր-
պով շարունակում էր իւր խօսքի ընթացքը , բայց յետոյ ի-
մացանք՝ որ յիմար կանայք իրենց մեռելների անունովն էին
ողբում և գոռում : — Ուրեմն սուրբ աւետարանումը մեր
ողբում է փրկին ի՞նչ է հրամայում . “ որ սիրէ զուստր կամ
զղուստր առաւել քան զիս , ո՛չ է ինձ արժանի , , : Եթէ մե-
ռելը բարեգործ և առաքինի մարդ էր՝ ուրեմն կարեւորու-
թիւն չունի նորա վրայ ողբալ , զի նա արդէն իւր վարձքը
ստացած կը լինի յաւիտեանականութեան մէջը . եթէ վատու-
թեամբ և մոլութեամբ անցուցանելով իւր սակաւօրեայ կեան-
քը մեռած է , նորա վրայ էլ ի՞նչ քան ողբան՝ անօգուտ է .
իսկ եթէ մանկութեան ժամանակի մէջ մեռած է՝ հարկաւ

սուրբ արքայութեան ժառանգ եղած է . էլ ինչ հարկաւոր է լաց ու կոծը , վերջապէս ամէն աստիճանի մեռելոց վրայ չափից աւելի կոծը՝ Գրիստոնէական յուսոյ և կրօնի անվայել միանգամայն և եկեղեցւոյ օրինաց հակառակ է . ահա մեր Յիսուս փրկիչը օրինակ վեր առնենք մեզ համար , զի նա ինքն էլ լաց ելաւ իւր սիրելի բարեկամ Ղազարու վրայ (երբ որ չորեքօրեայ մեռած էր) ոչ թէ տաճարումը՝ այլ թէ գերեզմանի վրայ , և չափաւոր . « Եւ արտասուեաց Յիսուս » , գրում է աւետարանիչը . նմանապէս և լաց ելան Ղազարու քոյրերը , և միւս կանայք՝ որոնք եկած էին գերեզմանի վրայ : Ուրեմն մենք եթէ Գրիստոսի հետևող ենք , և հաւատում ենք մեռելոց վերջին յարութեան , ապա չափաւորենք մեր ողբ ու լացը , և յուսահատական տխրութիւնը : — Սիրելի , բաւական համբերութիւն և կատարեալ հաւատք պէտք է՝ որ կարողանան դիմանալ աղէտալի արկածից , և չ'ողբալ դառնակսկիծ արտասուօք : — Եթէ Յիսուսի սէրը , նորա պատուիրանքը , եկեղեցւոյ օրէնքը , և համօրէն մեռելոց վերջին յարութիւնը մտքեր բերեն՝ չը կարծեմ թէ այն քան անհամբերութիւն ունենան . բայց կան այնպիսի լացողներ՝ որ ոչ մեռել ունենան՝ և ոչ նոյն մեռելի ազգական են , նոքա ինչ պատճառով գոռում ու կոծում են : — Նոքա էլ լալկան կնիկներ են , որ 'ի հաճոյս մարդկան կ'երգեն Հայերէն և Վրացերէն երգեր , և Պարսկերէն բայաթիներ , որպէս զի պատիւ ունենան մեռելի տանը ճաշելու . այնպիսիները քանի տարի առաջ երեւել քաղաքներումը վարձքով գընում էին հարուստ ննջեցելու վրայ բայաթի ասելու , և այնպէս երգելով՝ դադարի հետը գնում էին մինչև 'ի գերեզման . բայց այժմ կարծեմ թէ անհետացրել են , յիշաւի գովութեան արժանաւոր են Հայաստանի մի քանի քաղաքների կամ գիւղերի կանայք , որոնք թէպէտ կ'ուլան , կ'ողբան՝ բայց համեստօրէն առանց մի ձայն հանելու , մեղմաբար մորմոքում և մրմնջում են , և այն՝ առանձին ժամանակ , ոչ թէ բազմամբոխ ժողովրդոց ներկայութեան և ժամերգութեան միջոցումը : — Բայց զիտէ՞ք հայր , որ շատ անգամ քահանայքն

փոխանակ այնպիսի անտեղի սովորութեանց դէմն առնելու՝ էլ աւելի սաստկացնում են մեռելի վրայի լաց ու ողբը . զի մեռելի սովորական կարգը կատարելից յետոյ՝ սկսում են Պարսկական՝ կամ անճոռնի եղանակներով գանձ ասել . « Ասոր եհաս հրաման Արարչէն » . , կամ ես զիս դրի հազար տարու . . , և կամ ուլ քահանայք և վարդապետք , *lax lax*) . յետոյ սկսում են արք և կանայք անճոռնի ձայներով , այլանշակ դէմքերով , այլ և այլ խօսքերով գոռալ ու ողբալ , և եկեղեցին թնդացնել , որ բանիմաց մարդկանց զղուանք կը պատճառէ , և միանգամայն մեր Հայկական եկեղեցւոյն անպատվութիւն կը բերէ :

— Ի՞նչպէս անեն խղճալի քահանայք , մեռելի տէրերն են խնդրում , որ իրանք էլ լան ու ողբան , իբր թէ սրտերը փոքր ինչ հովանալու և մխիթարուելու համար :

— Կարծեմ թէ մի քանի շահի փող շահուելու նպատակով են գանձ ասում . զի ասել տուողները մեռելի վրայ փող են գծում , բայց քահանայք ուրիշ միջոցներով կարող են նոցա մխիթարել . եկեղեցւոյ պատիւը չը զոհելով իրենց շահ սիրութեան : — Բարեկամ , դուք իբր թէ Եւրոպական լուսաւորեալ Հայկազուն երիտասարդներդ՝ եկեղեցւոյ իրաւանց իբր պաշտպան հանդիսանալով սկսում էք որեւիցէ աստիճանի Հայոց եկեղեցականներին անսանձ լեղւով պարզամիտ ժողովրդոց առջև բամբասել և պախարակել ընդհանուր կերպով . բայց այս առարկայիս վրայօք ուրիշ ժամանակ կը տեսնուինք ձեզ հետ և կըխօսինք . առ այժմ շարունակենք մեր խօսքի ընթացքը . ուրեմն ինչ միջոցով կարող ենք վերացնել այս վատթար և անտեղի սովորութիւնը մեր ազգի միջոցը : — Պատրաստեմ , հայր , ձեզ հետ որեւիցէ առարկայի վրայօք միշտ խօսելու . բայց այս անվայել սուգի դէմն առնելու համար՝ հարկաւ ձեզ յայտնի է , մեր Սրբազան Հայրապետ մեծն Ներսէսը նշովքով անհետացրուց Հայաստանից այսպիսի հիթանոսական կոծումները . ուրեմն դուք էլ կարող էք վերացնել քարոզելով , խրատելով , յադիմանելով թէ հրապարակաւ , թէ և առանձնապէս . տարակոյս չկայ՝ որ

կամաց կամաց անհետանայ՝ և պարկեշտութիւն տիրէ մեր եկեղեցւոյ մէջը՝ այնպիսի միջոցներովմը . և եթէ ձեր խօսքը ազդեցութիւն չունենայ, կարող էք գրել Արարատ Ամառ գրոյ Խմբագրութեան, կարելի է մի անկիւն շնորհէ այս մեր խօսակցութեանց . դորա համար տարակոյս չունիմ . բայց ի՞նչ օգուտ, երբ մեր կենդանի բարբառը ազդեցութիւն չունի (ձեր շնորհիւր), գրաւոր խօսքերն ի՞նչ ազդեցութիւն պէտք է ունենայ :

— Կիտէք հայր, զի Արարատը հաղարաւոր բաժանորդներ ունի, ամէնքն էլ երբ կարգան՝ հարկաւ չը կարգացողներին էլ կը հաղորդեն, և այն ժամանակ ամէնքն էլ իրեանց ընտանեացն կը սաստեն՝ որ էլ այնպիսի այլանդակ կերպով չը լան և չը գողան : — Ուրեմն գրիչս վեր առնեմ գրեմ, բայց պարոն, մի բան մոռացանք խօսելու . հապա այն՝ որ ներսանց և դրսանց զարգարուն նոր շինել տրուած պատուական դագաղին մէջ Թանգազին գոհաներով և ազնիւ շորերով հագուած մեռելը դնում են, նորա անշունչ և ցուրտ մարմնոյ դէմքը և ձեռքը յաճախ համբուրում, և երեսին մտիկ տալով իբր կենդանի մարդու հետը խօսում են, և չափիցը յաւելի շռայլաբար ծախքեր անխնայաբար ի զուր տեղ մտնում են (փոխանակ կարօտելոց, և աղքատաց առատօրէն բաշխելու), նորա համար էլ մի բան հարկաւոր չէ գրել :

— Ի՞նչ թէպէտ արժան է գրել, բայց թողունք, ուրիշ պատեհ ժամանակ դորա վերայ կը խօսինք : — Այն թէ փառասէր փողաւոր մարդիկ մեզ քարկոծեն : — Դուք երկիւղ մի կրէք . ես ձեր փոխանակ կը լինեմ Մարտիրոս, բայց այժմ այս խօսուածքներս գրելով՝ եղէք Հայաստանեայց Ս . Եկեղեցւոյ իրաւանց ջատագով, նորա Ս . օրինաց նախանձախնդիր, և մեր սիրելի Ազգին անձնանուէր :

Գ Լ Ո Ւ Խ Ս , Օ :

Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ի Տ Ե Ի Ժ Ո Ղ Վ Ե Դ Պ Ց Փ Ո Խ Ա Դ Ա Ր Ձ
Պ Ա Ր Տ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն

“ Որ Էարոտ Վերահայր ընեն երեցունս ,
չընեն զարոտ արժանի եղիցին :

... “ Եւ արժանի է հշտն վարձու երոյ , :

(Տե՛ս . Ա . Է . 17—18) :

(1) . Հայկական եկեղեցւոյ քահանայն օրինաւորապէս կ'ընտրուի մի և նոյն քաղաքի կամ գիւղի ժողովուրդից . ուստի քահանայն իւր նուիրական պաշտօնի պարտաւորութիւնը ճանաչելով՝ եկեղեցւոյ սրբազան խորհուրդները անթերի կերպով կատարէ, որպէս զի կրկին պատուոյ արժանի համարուի . ըստ այնմ թէ “ Որ բարւոք վերակացու լինին երիցունք, կրկին պատուոյ արժանի եղիցին , :

(2) . Իսկ ժողովուրդը յօժարակամ սիրով քահանայի նիւթական կառավարութեան համար հոգըս քաշէ, և չըթողու նորան որ և իցէ կարօտութեան, և նեղութեան մէջը հեծէ և տառապի . հետեաբար և պարտաւորի հեռանալ ժողովուրդէնից . “ Զի արժանի է մշակն վարձու իւրոյ , : Ահա այս է փոխադարձ պարտաւորութիւնք քահանայից առ ժողովուրդն, և ժողովուրդէն առ քահանայս :

(3) . Ի՞նչ ժողովուրդն է քահանայից իբրեւ հոգեւոր հաղաւտ օրդի, իսկ քահանայն՝ իբրեւ խնամածու հայր, և Ժո-

դովրդեան զաւակաց դաստիարակ, և ուսուցիչ կրթել և մարդիւ նոցա Աստուած պաշտութեան, բարոյականութեան սկզբունքներով:

(4) . Պաղովուրդն է՝ իբրև հովուասէր ոչխար, իսկ նորա անձնադիր հովիւ կը համարուի քահանայն, որ Ս . Աւետարանի դաւարազեղ արօտների վրայ ճարակեցնելով՝ հոգևորապէս մուսնանէ, և ոչխարազգեստ յափշտակող գայլերից պահպանելով՝ Ս . Արքայութեան փարախը մըտցնելու օժանդակէ:

(5) . Պաղովուրդեան միտքն է՝ իբրև ամուլ անդաստան, որոյ մէջը Ս . Աւետարանի բարի սերմունքներ ցանող հոգևոր մշակն է քահանայն, որ մշակէ նոցա զանազան տեսակ առաքինութեան պարարտութիւններով, պահպանելով չար օրոմնացաններէն Ս . Արքայութեան շտեմարանի մէջը ժողովելու զուտ և մաքուր ցորեան պատրաստէ:

(6) . Պաղովուրդն է՝ իբրև նորատունկ ծառ տնկուած Ս . Եկեղեցւոյ պտղատու այգւոյ մէջը . նորա հաւատարիմ այգեպանն է քահանայն, որ պահպանելով նոյն վնասակար ճիւղերիցը, և դարմանէ անձնուիրաբար, և վերջապէս Ս . Արքայութեան համար արժանաւոր համեղաճաշակ պտուղներ պատրաստէ:

(7) . Պաղովուրդը հոգևորապէս ենթարկուած կը լինի բազմատեսակ հիւանդութեանց . նոցա հոգևոր բժիշկն է քահանայն, որ խոհեմութեամբ զննէ նոցա հոգւոյ բաղկերակը, և մատուցանէ նոցա Ս . Աւետարանի ապաքինիչ դեղեր, և պահպանէ իրենց հոգւոյ առողջութեան վնասակար կերակուրներիցը, որպէս զի կարողանայ նոցա առողջ հոգւով ներկայացնել Երկնաւոր Թագաւորին:

(8) . Պաղովուրդը հոգևորապէս կը Թափառի տգիտու-

թեան խաւարի մէջը . նոցա լուսատու ճրագն է քահանայն, որ կը դրուի Ս . Եկեղեցւոյ բարձր աշտանակի վրայ, Ս . Աւետարանի վարդապետութեան լուսովը նոցա մտաց խաւարը փարատելու, և նոցա որդիս լուսոյ, և որդիս տունջեան պատրաստելու:

(9) . Պաղովուրդն է՝ իբրև եփուած կերակուր . նոցա համեմիչ աղն է քահանայն, որ իւր համեղութեամբը որեւիցէ կերակուրի մէջը գձուելով՝ ախորժահամ կ'առնէ Ս . Արքայութեան մէջ մըտնելու:

(10) . Պաղովուրդն է՝ իբրև կենցաղոյս ծովու մէջ գըտնուած ձկներ . իսկ ձկնորսն է քահանայն, որ Ս . Աւետարանի ուռկանի մէջ ըմբռնելով նոցա՝ Ս . Արքայութեան ժառանգորդ հանդիսացնէ:

(11) . Պաղովուրդն է՝ իբրև տարակուսեալ 'ի վերայ երկուց ճանապարհաց . նոցա արիասիրտ առաջնորդն է քահանայն, որ Ս . Աւետարանի նեղ և անձուկ ճանապարհով առաջնորդէ նոցա դէպ 'ի կեանս յաւիտենից:

(12) . Պաղովուրդը նման է ծովածուփ աշխարհիս մէջ ալէկոծեալ նաւի . նորա ճարտար ղեկավարն է քահանայն, որ արթնութեամբ և խոհեմութեամբ Ս . Աւետարանի կողմնացուցով կառավարելով՝ առանց որեւիցէ վտանգի կարողանայ Ս . Արքայութեան նաւահանգիստ հասցնելու:

(13) . Պաղովուրդն է եկեղեցի զինուորեալ . նոցա քաջ և արիասիրտ զօրապետն է քահանայն, որ վայելչապէս ըսպառաղինած՝ իրեն հսաղանդ զինուորելոց գլուխ կանգնելով՝ նոցա հետ 'ի միասին, կորովութեամբ պատերազմին մարմնոյ, աշխարհի, և սատանայի դէմը, և արիութեամբ յաղթեն, որպէս զի ընդունին երկնաւոր Թագաւորիցը՝ ինքն և իւր թողովուրդը յաղթական մրցանակներ:

(14). Ո՛րքապէս ժողովրդեան առջև ը դրուած գտնուի քահանայն իբրև պարզ և անպղտոր հայելի, պարկեշտ, բարեսիրտ, անոխակալ, խաղաղասէր, և ամենայն առաքինութեամբ զարգարուած գործքերով. բարի օրինակ հանդիսանայ իւր ժողովրդեան. . զի նոքա գործնական օրինակով աւելի կը համոզուին՝ քան թէ խրատներով. որպէս զի՝ ի հանդերձելումն համարձակութիւն ունենայ ներկայացնել իրեն խնամոց յանձնուած ժողովուրդը երկնաւոր թագաւորին, և ասել վստահութեամբ թէ, «Ահա ես և մանկունք իմ», և լսել մեր կենարար Փրկչիցը այս քաղցր հրաւիրանաց ձայնը, «Որովհետեւ ՚ի փոքուդ հաւատարիմ եղեր, ՚ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մոտ յուրախութիւն Տէառն քո, ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ», . այնուհետեւ ժողովրդեան հետն ՚ի միասին կարժանանան երկնային փառացն:

(15). Որովհետեւ իրաւունք ունի հովիւը իւր պահպանած խաչների կաթնիցը կերակրուելու, երկրագործը իւր օերմանաժ ցորեններիցը հաց շինելու, այգեպանը՝ իւր դարմանաժ այգւոյ պտուղներիցը ճաշակելու, բժիշկը իւր առողջացրած հիւանդների նուէրքներիցն օգտելու, Ջրագը՝ իւր մէջը լցուած իւղից վառուելու, ձկնորսը՝ իւր ըմբռնած ձուկիցը վայելելու, ղեկաւարը՝ իւր աշխատանաց վարձքն ընդունելու, և ամէնք իրանց վաստակոց համաձայն շահվում են. ապա քահանայն՝ որ հոգւորապէս սերմանում է, մարմնաւորապէս և հրձեղութեամբ շունչնայ միթէ:

(16). Իայց զժբաղդաբար մեր Հայոց ազգի քահանայից ոմանք՝ չը բաւականանալով ժողովրդեան օրինակատարութեան արդիւնքով կամ նուէրքովը՝ ծանր պարտուցներ քեւ ճնշուած՝ թող են անում ժողովուրդն առանց հոգւոր մխթարութեան, թափառում են յերկրէ երկիր իբրև մուրացական, ողորմութիւն հաւաքելու, ՚ի նախատինս իրանց քահանայական աստիճանին, և յանապատութիւն իրանց ընտրող ժողովրդոց. ուրեմն պարտաւոր է ժողովուրդը՝ հոգալ իւր

քահանայի նիւթական կարեւոր պակասութիւնները. և պատրաստել նորա համար լաւ ապրուստ. գոնեա՛միջակ ժողովրդեան չափ միջոց ունենայ իւր գերդաստանը կառավարելու անկարօտ կերպով:

(17). Իթէ ցանկանում է ժողովուրդը մի լաւ գոհացուցիչ վեճակ պատրաստել իւր անձնանուէր քահանային՝ ամէն մէկը իւր երկրի հանգամանաց համաձայն՝ չափաւոր ոռճիկ որոշէ նորան, որպէս զի անկարօտ և անտրտուն լինելով կառավարէ իրեն ընտանիքը, և ինքն էլ սուրբ եկեղեցւոյ որեւիցէ սրբազան խորհուրդները ձրիապէս կատարէ և ամեն ժամանակ երկու կողմիցն էլ անբաւականութիւններ չըծագին և զուր տեղից չը բամբասուին ամէն տեղ և ամէն այլակրօն ազգաց առջևը թէ՛ ժողովուրդը և թէ՛ քահանայն ՚ի նախատինս Հայ ազգութեան անուան. և այս ոռճիկը՝ կարող է ամէն մարդ իւր կարողութեան չափ ստորագրուիլ արքունական տուրքի նման, իբր մի հոգւոր տուրք, և տարուէ տարի ինքնայօժար կերպով վճարել մի հաւատարիմ գանձապետի ձեռնով:

(18). Իյս ամեն խօսուածքներիս իբրև մի կարեւոր առաջարկութիւն՝ կը ներկայացնեմ մեր Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ ջերմեռանդ հարազատ որդւոց. տարակոյս չունիմ որ ընդունելի համարուի. բայց այն տեսակ եւրոպական լուսաւորեալ ձևացող Հայ անուն մարդկանց հետ գործ չունիմք, զի նոքա մի այնպիսի ազգի անուն իրանց վերայ ունենալն անգամ՝ նախատինք են համարում, կարգաւոր ուրիշ ազգաց անկրօն աղանդաւորաց թունալի և հոգեկորոյս գրգիռ՝ համարում են ինքը զինքները Արիստոտէլի՝ Պղատոնի և աշակերտների. իրանց իմաստակութեամբը ամեն որեւիցէ հոգւոր պարտաւորութիւն բանի տեղ չեն համարում. Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ սրբազան խորհուրդները իրանց համար աւելորդ և ծանր սովորութիւն են համարում. երբեմն էլ եթէ պատահի մտնեն եկեղեցին՝ եւրոպական այլա-

միւսին յաղթէ՝ և հաստատուի դաշնակաւոր խաղաղութիւն . (պատասխանեցի) բայց այն աղգը որ ոչ քաղաքական իրաւունք ունի, ոչ զօրք ունի, ոչ զօրութիւն (ինչպէս է մեր աղգը), միթէ պարտաւորեալ չէ իւր հայրենական լեզուի և կրօնի իրաւունքը պաշտպանել : — Այդ բանին տարակոյս չըկայ, զի մեր արժանայիշատակ նախնիքը այս սք իրաւանց հմր շատ հալածանքների դիմաց և արիասրտութեամբ հետևած են :

— Իբրեւի թէ Հայոց Արամ՝ Նահապետը հայրենի լեզուի իրաւանց դէմ մեղանշած է, նա երբ որ գնաց Եպպա գովկիոյ վիճակին տիրէց՝ նոյն կողմերի ազգերին խստիւ պատուիրեց որ Հայերէն խօսին . նմանապէս և Արշակունեաց Արշամ թագաւորը մեղանշեց, նա էլ Ենանոս Բագրատունեաց նախարարին (որ Հրէայ էր) և նորա որդւոց ըստիպեց թողուլ հայրենի կրօնը՝ և դառնալ ի հեթանոսական պաշտօն : — Այո, կռապաշտութեան ժամանակները որ և իցէ իրաւունքները միշտ ոտնակոխ կը լինէին, ինչպէս որ պարսից կրակապաշտ անօրէն թագաւորները, մեր Հայրենի սուրբ կրօնի Հայաստանի միջեցը բոլորովին ջնջելու համար, թնչ չարաչար հնարքներ ի գործ չը դրին, զանազան խորամանկ խարէութիւններով . բայց ոչինչ մի օգուտ չը կարողացան ձեռք բերել իրանց համար . պարսից մոլեռանդ մոգեր և մոգպետներ չէին որ թելադրեցին Յազկերտ անօրէն թագաւորին, որպէս զի Հայերին ստիպէ իրանց զրադաշտական օրինաց հետեւելու (հակառակ կրօնական իրաւանց) . հետեւաբար և եղաւ մեծ արիւնահեղ պատերազմ Աւարայրի գաշտումը, և Հայոց քաջ նախարարներից ոմանք աճնանուէր զօրքերով նահատակուեցան նոյն պատերազմի մէջը, որոց գլխաւորի անունովը ասուեցաւ Արդանանց պատերազմ . և մինչև ցայսօր նոցա արժանաւոր տօնախմբութիւնը մեր Ս. Եկեղեցին հանդիսաւոր կերպով կատարումէ . նմանապէս և Մամիկոնեան քաջն Ահաբ իւր հայրենի օրինաց պահպանութեան համար ընդդիմացաւ Պերոզ թագաւորի անթիւ զօրաց և յաղթեց, զի Հայոց աղգը մինչև ցարդ իւր վրայ իշխող Տէրութեանց միշտ ցոյց տուած է իւր հաւատարիմ հպատա-

կութիւնը և անձնանուէր ծառայութիւնը . սակայն իւր հայրենի լեզուի, և կրօնի իրաւունքը պաշտպանելու համար՝ սաստիկ հալածանքների համբերած է :

— Ի անկթէմուրի համար էլ ասում են, թէ Հայերի վրայ մեծ հալածանքների հանած է : — Այո, այն բարբարոս և անօրէն բռնակալը բաւական չը համարելով այնքան աւերութիւններ (որ ի գործ դրաւ), մեր հայրենի կրօնը և լեզուն Հայաստանից բոլորովին ջնջելու համար՝ Հայերէն լեզուի կրօնական, պատմական, և ուսումնական հազուագիւտ գրքերը հաւաքեց և այրել տուաւ . և շատ գրքեր էլ հետը տարաւ և սմրղանդ բերդի մէջ բանդարկել տուաւ . և ապագայ սերնդոց վրայ էլ նշովք դրաւ՝ որ ոչ ոք այն տեղից գիրք դուրս չբերէ : — Ապա գանք մեր այսքան խօսուածքների բուն նպատակին : Անցեալ տարիները մի գործ պատահեցաւ ինձ գնալ Քիւրդստանի կողմերը . մի Ըատախ անունով մեծ գիւղաքաղաքի մէջ բնակւում էր իւր բազմաթիւ արքանեակներով մի քիւրդի Շէյխ . սա մեծ ազդեցութիւն ունէր այն գաւառի Հայ և Քիւրդ բնակիչների վերայ . և Օսմանեան տէրութեան կողմից գրուած գործակալին ոչինչ բանի տեղ չէր համարում, ինք զինքը համարում էր իբրեւ մի սուրբ մարգարէ, զի Ճիզուկիների նման իրան գաղտնի լրտեսների միջոցաւ կարող էր զանազան տեսակ գուշակութիւններ անել և հաւատացնել պարզամիտ Քիւրդ ժողովրդոց, որոնք աստուծոյ նման պաշտում էին . Հայերի երեսին մտիկ տալ իրան համար պիղծ էր համարում, և խիստ հալածանք հանեց նոյն գաւառի մէջը գտնուած Հայերի վրայ, որոնք թողած իրանց տները, և այգիները, արտերը, և բոլոր կաւուածները, միանգամայն և իրանց հայրենիքը, իրանց գերգաստանի ձեռներիցը բռնած, լալով, ողբալով գաղթեցան Անայ կողմերը . և մինչև ցարդ իբրեւ մուրացական քաղաքի փողոցներումը թափառում են, իսկ ոմանք Անայ գիւղերումը բնակուեցան : Այս անօրէն Շէյխը հարկադրում էր հայերին (զանազան խորամանկ հնարքներով) թողուլ իրանց հայրենաւանդ սուրբ կրօնը և թուրքանալ :

Երբ որ մերժում էին նորա հրամանը՝ այն ժամանակ անհնարին տառապանքներով նեղացնում էր, և երբեմն բարկանալով բարբառնում էր իւր արբանեակներին՝ «Հայերի եկեղեցիների հետ աւելի գործ չունենանք. ապա աշխատեցէք արգելք լինիլ նոցա մանուկների համար ուսումնարան բաց անել, զի այս միջոցաւ մեր նպատակին կը հասնենք. մնալով նոցա մտաւոր կուրութեան մէջը՝ կրօնն էլ լեզուն էլ կը մոռանան, և հետեւեալ կը թուրքանան ամէնքն էլ,» . այս որ զգացին խղճալի Հայերը՝ իսկոյն դուրս եկան այն գաւառիցը՝ և այնքան զեղերը մնացին ամայի, և անմարդաբնակ. և այն բարբարոս Շէյխը իւր նպատակին չը կարողացաւ հասանիլ. — Ինչպէս որ լսվում է՝ Մուշի, և Վանայ նահանգներումը դարձեալ այդպիսի հարստահարութիւններ, սրբապղծութիւններ մինչև ցարդ պատահում է այն անօրէն ֆրդերիցը. զորօրինակ վանք և եկեղեցի կողոպտել, մարդասպանութիւններ անել ևն :

Սերմն հրաւիրենք խոնարհաբար մեր ազգասէր վեհափառ Գէորգ Դ. Աստուածարեալ Կաթողիկոսի հայրական ուշադրութիւնը այնպիսի հարստահարեալ ազգայնոցս վերայ, որպէս զի արթուն և անձնաւիր հովուի նման հսկէ իւր ամեն աշխարհ ցրուած հովուասէր ոչխարների վրայ, անգութ ոչխարազգեստ պատառող գայլերի՝ ի զոհ չը մատնուուիլ : — Բայց մի կողմից էլ միթարվում ենք, տեսնելով մեր այժմեան Հայոց ազգի գլխաւոր տիրող հպատակասէր բաբեխնամ Ռուսաց, Օսմանեան, և Պարսից տէրութիւնները, որ ցանկանում են, և մեծ ջանք են ի գործ դնում, որպէս զի թերևս Հայոց ազգն էլ Եւրոպացի լուսաւորեալ ազգի նման ճանաչէ իրան լեզուի, և կրօնի իրաւունքը, և զարգանայ բարոյական և նիւթական յառաջադիմութիւն. և մեր վեհափառ Կաթողիկոսի գովելի բաղձանաց համաձայն արտօնութիւն են տալիս ամէն մի Հայաբնակ քաղաքներումը, և գեղերումը հաստատել հոգեւոր, և ծիսական ուսումնարաններ, ոչ թէ միայն տղայոց՝ այլ և ապագայ սերնդոց ուսեալ մայրեր պատրաստելու համար՝ օրիորդաց համար, և ազգային տուրքե-

րով կամ աղբիւրներով կառավարել՝ որպէս զի իրանք էլ ունենան այսուհետև լուսաւորեալ, և քաղաքակիրթ հպատակներ ի պարծանս իրանց փառաւոր և պանծալի անուանոց, որով և պարտաւորցնեն տիրասէր և հաւատարիմ Հայոց ազգին՝ ամէն ժամանակ ի բոլոր սրտէ լիաբերան բարեմաղթութիւններ վերառաքել առ ամենաբարձրեալն Աստուած նոցա անգին և երջանիկ կենաց բարօրութեան համար :

Գ Լ Ո Ւ Խ Բ .

ՀԱՅԵԱԶՈՒՆ ԵՐԿՍԵՌ ՄԱՆՈՒԵՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱՆՈՒԹԻՒՆ :

Սիւղէ Իսթամբուլէ երկու Տեառն :

(Առ. 1—7 :)

(1) . Սեր Հայկազուն մանուկների դաստիարակութիւնը թէև լեզուները բացուած օրից սկսելով է, (ինչպէս որ Եւրոպացւոց կրթեալ մայրերից կրթվում են այնպիսի թոթովախօս մանուկներ) բայց գոնեա չորս կամ հինգ տարեկան հասակին էլ սկսուի՝ դարձեալ բաւական օգուտ կրբերէ նոցա մտաւոր զարգացման. մինչև որ մեր Ազգն էլ Եւրոպացւոց նման պատրաստէ ուսեալ և կրթեալ մայրեր, բարեկարգ ուսումնարանաց շնորհիւ :

(2) . Մի դեռահաս մանուկ երբ որ նոր մտնէ ուսումնա-
րանի նախակրթարան , հարկաւ ուսուցիչը պէտք է վարուի
նորա հետ ինչպէս ընտանի բարեկամ զուարթ դէմքով , մին-
չե որ ընտելանայ նորա բնաւորութեան հետը , այն բաների
վրայ խօսի՝ որոց անուշները արդէն գիտէ նա . և սկսի մի և
նոյն բանի վրայօք հարց ու փորձ անել , և ամեն պարագանե-
րով հասկացնել . ի՜նչպէս՝ « գրասեղանը ինչո՞վ են շինու-
մ . և ի՞նչով փայտը ո՞ր տեղից են բերում » , և . նմանապէս
և ուրիշ առարկաների վրայօք կարող է մի քանի օր նորա
հետը խօսիլ քաղցրութեամբ , և այնուհետեւ կարեւոր է կըր-
թել նորան կրօնական , և բարոյական սկզբունքներով , և
զարդարել նորա միտքը օգտակար դաղափարներով :

(3) . Վրօնի վերաբերեալ ուսմունքը՝ այբբենարանի
հետն սկսելու է 1) . նախ սովորեցնել նորան ուղիղ կեր-
պով դէմքը խաչակնքել , և տալ քանիցս անգամ կրկնել
« Զանուն Հօր և Որդւոյ և Հօգւոյն սրբոյ , ամէն » , և յետոյ
սովորեցնել տէրունական աղօթքը , քի « Հայր մեր որ յերկինս
ես » , նմանապէս « Անկանիմօ առաջի քո » , և ուրիշ համառօտ
աղօթքներ . և բառերի միտքը մի առ մի բացատրել նորա-
կիրթ աշակերտներին՝ որ հասկանալով սովորի , ոչ թէ թու-
թակի նման , և տպաւորել նորա սրտի մէջը Աստուծոյ եր-
կիւղը , նորա ամենակարող զօրութիւնը , և մարդկային ազգի
վերայ ունեցած անսահման սէրը , և հայրական ինամքը , և
մեր ամենիս առ նորին Ամենակարող զօրութիւն ունեցած
պարտաւորութիւնները և :

(4) . Բարոյականութեան օգտակարութիւնները տպաւո-
րել աշակերտի մտքի մէջը զգալի օրինակներով , և բարոյա-
կանութեան վրայ գրուած զանազան գրքերից առնուած բա-
րոյական առակներով , և պատշաճաւոր պատմութիւններով ,
և հետեւեալ զգուցնել տալ նորան և զգուշացնել զանա-
զան մոլութիւններից , և ախորժեղի երեցնել որեւիցէ առա-
քինութեան արդիւքները , և այս միջոցներովս մշակել և ար-

մատացնել նորա սրտի խորքերումը Աստուծոյ աշտութեան
կրօնի և բարոյականութեան բարի և աղնիւ սերմունքներ .
որպէս զի մի ժամանակից յետոյ իւր ազգին և Հայրենեաց
բարի պտուղ տուող բարի ծառ դառնայ . այսինքն՝ կրօնա-
սէր , բարեվարք , առաքինի , կրթեալ , և ազգօգուտ անդամ :

(5) . Վորավարժ մի աշակերտ անտարակոյս կը ցանկայ
օրէ ցօր գրավարժութեան , և զանազան ուսմանց մէջը զար-
գանալ . յապա նորան հարկաւոր է (այբբենարանից յետոյ)
Հայերէն լեզուի հասարակ ընթերցանութեան համար մի ձեռ-
նարկ , կամ դասագիրք . ուրեմն այժմեան գտնուած ընթեր-
ցանութեան դասագրքերիցն աւելի օգտակար է անտարակոյս՝
մի նոր դասագիրք , գրուած խիստ համառօտ , աշխարհաբառ
պարզ և զիւրհասկանալի ոճով , որոյ բովանդակութիւնն լի-
նի հին և նոր Ատակարանի , և Հայոց պատմութիւններ , և քա-
նի ինչ կրօնի բարոյականութեան վերաբերեալ խօսքեր , որոց
վերայ հիմնաւորապէս կարող է դաստիարակուել մի նորա-
վարժ աշակերտ , զի մեր արժանայիշատակ նախնիքը սովոր-
աբար աշակերտի սրտումը կրօնի զգացմունքը արթուն և
վառ պահելու համար՝ կրօնի վերաբերեալ գրքերի վրայ ա-
ւանդած են դաս խօսիլ . (գուցէ ևս . Թարգմանչաց ժամա-
նակից միացած այս օգտակար աւանդութիւնը) :

(6) . Վասն զի Հին Ատակարանի դասերումը կը կարգայ և
կ'իմանայ աշխարհիս և բոլոր արարածոցս Աստուծոյ հրամա-
նաւը ստեղծագործուելը , մեր նախկին ծնողաց պատուիրա-
նադանցութիւնը և պատժուելը , նոցա անդրանիկ որդւոյ ա-
նօրէնութիւնը և կրտսեր որդւոյ անմեղութեամբ սպանուելը ,
աշխարհակործան ջրհեղեղը , Նոյ նահապետի և իւր ընտա-
նեաց ազատուելը , Աբրահամի , և նորա սերնդոց գործքերը ,
Մովսէսի և Իսրայէլացւոց անցքերը , նոցա թագաւորութիւ-
նը , և վերջապէս գերութիւնը , Թագաւորութեան կործա-
նումը , գերութեանից ազատուելը , և . որոնցից կարող է մի
կրթեալ աշակերտ քաշիլ բարոյական մտքեր՝ և շահուիլ
հոգեւորապէս :

(7). Իսկ նոր Կտակարանի դասերումը՝ կը կարգայ և կ'իմանայ մեր Յիսուս Փրկչի հրաշալի ծնունդը, մկրտութիւնը, աշակերտաց ընտրութիւնը, նորա Աստուածային զօրութեամբ գործած զանազան հրաշքները, և հոգեշահ առականքով քարոզած վարդապետութիւնները, մարդկային ազգի համար նորա կրած անտանելի չարչարանքը, և խաչի վրայ մեռնելը, թաղուիլը, և երեքօրեայ հրաշափառ յարութիւնը, և Աստուածապէս համբարձումը, նորա վերջին գալուստը և ընդհանրապէս դատաստանը, արդարոց յաւիտենական երջանկութիւնը, և մեղաւորաց յաւիտենական տանջանքը: Ապա հետեւեալ կարող է մի աշակերտ ճանաչել իւր քրիստոնէական պարտաւորութիւնները, և համարուիլ իւր հայրենի եկեղեցւոյն աւանդապահ, հաւատարիմ և հարազատ զաւակ, որոյ սուրբ արգանդիցը արդէն վերստին ծնունդ առած է:

(8). Խիստ կարեւոր է, հասակով զարգացած մի Հայկազուն աշակերտի տեղեկութիւն ունենալ և իւր ազգի պատմութեան. իմանալ Հայոց զլիակաւոր նահապետի, և նորա սերնդոց քաջազնական գործքերը, Հայոց թագաւորութեան անցքերը, քանիցս անգամ կործանուիլ, և դարձեալ կանգնիլ, և յետոյ բոլորովին վերջանալը, Հայոց մէջ երբեմն եղած արժանայիշատակ անձանց ազգօգուտ գործքերը, և ազգակործան մարդկանց քստմենքի, և պարսաւելի չարութիւնները, և Հայաստանի մէջ պատահած երեւելի դէպքեր, և թշուառութիւններն, այս ամէն պատմութիւնները որ մի աշակերտի սրտի մէջը տպաւորուի, տարակոյս չըկայ որ ազգասիրական ոգւով վառուած՝ թէ բարի և թէ վատ մարդկանց գործքերիցը հետեւութիւն հանելով՝ իւր Ազգին և Հայրենեաց օգուտ բերելու ազնիւ զգացմունք ունենայ:

(9). Որքանապէս Հայկազուն մանուկներ եթէ հմուտ և բարեվարք ուսուցիչներից մի այնպիսի օգտակար առարկաներ պարունակող դասագրքի վրայ հիմնաւոր կերպով դաստիարակուին՝ կարող են սովորել ազատօրէն և ուրիշ օգտակար

առարկաներ, կամ ուսմունքներ, և օտար լեզուներ. (եթէ նոցա ծնողքը չը խնայեն ուսմանց վերաբերեալ որեւիցէ նիւթական պակասութիւնները հոգալու իրանց ուսումնական քաւակաց համար. այսինքն դասագիրք, թուղթ, գրիչ, կաղամար, մատիտ ևն). կարող են կարդալ որեւիցէ ազգի օգտակար և անպղտոր գրքեր, կամ թարգմանութիւններ, մանաւանդ թէ լրագրեր, որոնցից քաղեն իրանց համար մտաւոր օգուտներ. էլ ուր որ գնան, և ինչ ուսումնարան որ մտնեն՝ վնաս չի կարող բերել նոցա հիմնաւոր դաստիարակութեան. զի արդէն արմատացած են նոցա սրտերումը Աստուծոյ երկիւղը, կրօնի, բարոյականութեան և ազգութեան բարի սերմունքը, որոնք ամէն ուսմունքից աւելի օգտակար են թէ հոգւոյ և թէ մարմնոյ, թէ աշխարհումս, և թէ 'ի հանդերձելումն. վասն որոյ իրաւամբ խօսած է բաղմիմաստ Սողոմոնը իւր առական գրքի մէջը, «Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն, հանճար բարի ամենեցուն՝ որք առնեն զնա»:

Գ Լ ՈՒ Խ Թ .

Ք Ա Ղ Յ Ր Ա Ն ՈՒ Ա Գ Ե Ր Գ Ո Ց Ա Ջ Դ Ե Ց ՈՒ Թ Ի Ի Ն :

“ Զայն էր գով յ ծառ-էն Բարեբախտ .
 յէս ԴԱՍԿԱՆԻՑ Ե՛ր Երեմիայի Նորա Դուռ
 Կոնք Եկեղեցոյ Երեմիայ : ” (Շարա .)

(1) . Վաղցրանուագ ներդաշնակ երգերի ձայները ոչ թէ միայն մարդկայինս բնութեան՝ այլ և անբան կենդանեաց վերայ մեծ ազդեցութիւն կը ներգործեն . զորօրինակ , ո՞վ չէ լսել գարնան եղանակներումը բնդ արշալոյսն երգեցող ծիծեռնակների դաշնակաւոր գեղգեղանքը , վարդերի բացման ժամանակը քաղցրաձայն սոխակների դայլայլիկը , այլ և այլ թռչունների ճռուվանքը , որոնք հարկադրուով են մարդկանս սեռին օրհնել և փառս մատուցանել նոցա բարեխնամ Արարչին , և հիանալ նորա ամենիմաստ ստեղծագործութեան վերայ : Ո՞վ չի տեսել արտաւար ամուլ եղների ոգևորութիւնը՝ երկրագործների երգած մշակական երգերովը : Ո՞վ չէ նկատել դալարագեղ դաշտերի վերայ ճարակող ոչխարաց կայտռիւլը , ոչխարասէր հովիւների հնչած սրինգների ձայներովը : Ո՞վ չի գիտել օրորոցի մէջ կայտառ մանուկների քաղցրիկ ննջումը , որդեսէր մօր օրօրական երգերովը : Ո՞վ չի զննել բերկրական խնջոյների մէջ գտնուած հանդիսականաց արտերի հրաշաւանքը , զանազան տեսակ նուագարանաց և քաղցրանուագ երգոց ձայներովը : Ո՞վ չի կարդացել Իսրայէլացւոց անդրանիկ թագաւոր դիւահար Սաւուղի սրտի ամոքումը սաղմոսերգու Դաւիթ սուրբ մարգարէի տաանաղեայ քերարի սրբտագրաւ եղանակներովը :

(2) . Պատշաճաւոր երգերի գործածութիւնը արդէն յայտնի են Սուրբ Գիրք կարգացողներին . ահա Իսրայէլացիք երբ որ կարմիր ծովէն իբրեւ ՚ի ցամաքի Աստուածային հըրաշքով անց կացան , և տեսան Փարաւօնի և նորա զօրաց ծովու մէջ ընկղմիլը , սկսեցին դաշնակաւոր եղանակով զԱստուած օրհնել , “ Օրհնեսցուք զՏէր զի փառք է փառաւորեալ , Դաւիթ քնարերգու մարգարէն մինչև իւր կենաց վախճանը՝ տաանաղեան քնարը Աստուածային սիրով վառուած սաղմոսերով երգելը՝ պարծանք էր համարում իրեն : Երեք մանկունք բորբոքուած հնոցի մէջ կերգէին . “ Օրհնեալ ես Տէր Աստուած հաբցն մերոց , . վասն որոյ և հրեշտակն իւրանց մէջ ընդունելով՝ հրաշալի կերպով ազատուցան .
 և և :

(3) . Մարդիկներին ՚ի զատ՝ երկնային զուարթունք անդադար կը փառաբանեն զԱրարիչն արարածոց , իրենց քաղցրանուագ դաշնակաւոր երգերովը , եսայի կայծակնամաքուր մարգարէին , “ Սուրբ , սուրբ , սուրբ , Տէր զօրութեանց , Սրբասացութեան երգը : Մեր Յիսուս Փրկչի Ծննդեան գիշերին հրեշտակները օդի մէջ կ'երգէին քաղցրանուագ եղանակով “ Փառք ՚ի բարձունս Աստուծոյ , . որով և հովիւները ոգևորած՝ միաբան խորհրդով ՚ի Բեթլէհէմի այրն դիմեցին յերկրպագութիւն նորածին սուրբ Մանկան :

(4) . Թէ և միւս քրիստոնեայ ազգաց եկեղեցիների մէջ ժամերգութեան միջոցումը զանազան դաշնակաւոր նուագարաններով կամ ձայնաւոր երգերով կատարուէն իրենց եկեղեցական պաշտամունքը , բայց մեր Հայկական եկեղեցոյ երջանկայիշատակ Սրբազան Հայրապետներ և Հայրեր ժողովուրդոց ջերմեռանդութիւնը դէպ յԱստուած պաշտութիւն առաւել շարժելու նպատակաւ , յօրինելով Հոգւոյն օրբոյ շնորհիւ զանազան եղանակաւոր երգեր , տաղեր , մեղեդիներ , և մ'ենդ բարոյական ակունքներով շարուած և զարագրուած հազուագիւտ շարականներ՝ աւանդած են մեր Հայաստանեայց

առաքելական եկեղեցւոյ մէջ յաւերժական յիշատակ . յորում քաղցրանուագ ներդաշնակութեամբ երգելով պաշտենք և օրհնենք միշտ զԱրարիչն արարածոց , նմանելով երկնային փառաբանիչ զուարթնոց :

(5) . Հայոց ժողովուրդն իւր միջից կընտրէ եկեղեցական ծիսից և արարարողութեանց հմուտ քահանաներ և համեղաձայն երգիչներ կամ տիրացուներ , որպէս զի ժողովրդոց սրտերը շարժեն 'ի ջերմեռանդութիւն , իրանց համաձայն երգած շարականներով և ուրիշ խորհրդաւոր երգերով 'ի ժամ պաշտաման աղօթից , թէ առաւօտներ , թէ երեգոյիներ և թէ սուրբ պատարագի միջոցումը . վասն զի ամէն շարականներ ենթարկուած են զանազան տեսակ ձայների և եղանակների փոփոխութեանց . ուրեմն թէ քահանայք և թէ դպիրք կամ տիրացուք կը պարտաւորին հմուտ երգիչներին սովորել և ապա ձայն ձայնի՝ եղանակ եղանակի յարմարցնելով և մեղմաձայն և քաղցր եղանակներով դաս առ դաս երգել , ոչ թէ խառնաշփոթ ձայներով եկեղեցին բաբելոնեան աշտարակ դարձնելով՝ ունկնդրաց սրտերը պղտորեն և գայթակղութեան առիթ դառնան , ինչպէս պատահում է ուրեք ուրեք , որ երբեմն եկեղեցւոյ մէկ դասից սկսում են ցած ձայնով՝ էն միւս դասից բարձրացնում են , մէկը ծանր կերպով է երգում , էն միւսը թեթեւացնում , մինը սկսում է չորրորդ ձայն , միւսը՝ երկրորդ ձայնով է պատասխանում . իսկ երգեցողներին ոմանք թողած երգեցողութիւնը , սկսում են իրար հետ թշնամաբար վիճել , հետեւաբար եկեղեցին դարձնում են կրուի ասպարէզ , և ժողովուրդն յուսահատած գայթակղում է . ապա եթէ այնպիսի գայթակղեցուցիչ պատճառներից ստիպուած եկեղեցի յաճախելից դադարի , հիմ է մեղաւորը , անտարակոյս եկեղեցական պաշտօնեայք , և զլեւաւորապէս քահանայք , որոնք այնպիսի անկարգութեանց դէմն առնելու անփոյթ են լինում :

(6) . Ուրեմն ժողովրդեան սրտերը դէպ 'ի ջերմեռան

դուծիւն շարժող , յեկեղեցին յաճախելու միակ միջոցն է՝ քաղցրաձայն դպրաց ներդաշնակ երգասացութիւնը , մանաւանդ պատարագի սրբարար խորհուրդի ժամանակը՝ երբ որ խիստ յարմար եղանակով երգեն թէ դպիրներ և թէ սարկաւազներ , ինչպէս որ տեսած ենք մեր Հայաստանի բարեկարգ եկեղեցիներումը , ուր երգվում են խիստ վայելուչ և սրտաշարժ կերպով թէ շարականներ և թէ պատարագի սրբարար խորհուրդի միջոցումը քաղցրանուագ եղանակներ , շարժումն ունկնդիր ժողովրդոց սրտերը 'ի ջերմեռանդութիւն աղօթից , որոնք հետեւաբար հաճախում են յեկեղեցին ամեն ժամանակ , միթարուելով հոգևորապէս , մանաւանդ եկեղեցական հանդիսաւոր օրերումը , զի ժողովրդոց այնքան ազդեցութիւն չի ներգործել եկեղեցւոյ հոյակապ շինուածքը և միջին թանգազին և շքեղ զարդերը՝ որքան երգիչների քաղցրանուագ երգասացութիւնը :

(7) . Եւսթի Թոմա աշխատի ամեն մէկ քաղաքի կամ գիւղի Հայ ժողովուրդն իւր եկեղեցին զարդարել , ինչ թէ լոկ նիւթական զարդերով , այլ և քաղցրաձայն տիրացուներով և մանուկներով պատրաստել տալով իւրաքանչիւր ազգային ուսումնարաններումը և ծխական դպրոցներումը , ինչպէս որ մեր սուրբ Թարգմանիչները ընտրում էին այնպիսի երկարաշունչ Հայ մանուկներ յատկապէս եկեղեցեաց մէջ երգելու , և վերջապէս քահանայ դառնալու համար : Ահա այժմեան մեր վեհափառ Գէորգ Դ . Սրբազնազոյն Հայրապետի իսկ սրտի բաղձանքն է եկեղեցեաց պայծառութեան համար պատրաստել արժանաւոր եկեղեցականներ , որոնցով զարդարել մեր Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին 'ի փառս Ամենաուրբ Երրորդութեան :

Գ Լ Ո Ւ Խ Ժ .

ԱԶԳԱՅԻՆ ԿԼԵՐԱԿԱՆ ԴԳՐՈՑԻ

ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ

(1) . Կարգումեք երբեմն մեր ազգային լրագիրներում մեր քաջանաների դէմ զանազան տեսակ անվայել զրոյցներ և զեղծմունք իբր թէ այնպիսի անկարգութիւնների առաջն առնելու նպատակով , բայց 'ի նկատի առնենք , թէ արդեօք նոյն լրագիրները ո՞ր քաջանան է կարգում և նոցանից օգուտ քաղում , կարծեմ թէ հազարից մինը : Ուրեմն այս վատահամբաւութիւնների հրատարակութիւնները քաջանաների ազդեցութիւնը ժողովրդոց մէջ պակասացնելուց զատ , ոչինչ մի օգուտ չէ բերում նոցա վարքի ուղղութեան : Սակայն անտարբեր մնալով առանց գործնական կերպով հարք գտնելու , մեր հայկական Առաքելական Եկեղեցին կրնամանայ իւր նախնական փառքից այնպիսի անարժան պաշտօնականների զեղծմունքով :

(1) . Եւրա ինչ որ կ'սպասուի անհմուտ և անտաւոր բըժշկից , ճանապարհ չիմացող առաջնորդից , 'ի քուն թմրեալ հովուից , ղեկավարութենէ անտեղեակ նաւապետից , իւղ չունեցող լապտերներից , պղտորադէմ հայելուց և անհամեմիչ աղից , նոյն և կ'սպասուի այն քաջանայից՝ որ իւր կեանքի մէջ սովորած է միայն մեքենայաբար հասարակ ընթերցանութիւն , և իւր անձնական օգտի համար մի արուեստ , իսկ գիւղացի քաջանան տեսած է միայն արտավար եղներ , բուսաբեր դաշտեր և ձեռին բռնած է գութանի մաճ , մանգաղ , և գերանդի , միով բանիւ ամենօրեայ գործն եղած է վարել , ցանել , հնձել , և կասել :

Եւրան տեսնում ես եկեղեցում իբրեւ պաշտօնականտար

քահանայ , իսկ դաշտում իբրեւ մշակ կամ երկրագործ , նա կարգումէ մեքենայաբար խիստ նուազ գրավարժ կերպով աղմուս , ժամադիրք , մաշտոց և աւետարան . մանաւանդ թէ ամանք ուղիղ ընթերցանութենէ զուրկ՝ այնքան ընչ չէ՛ կրկնում են , մինչև որ ունկնդիր ժողովուրդին հարկադրում են զրկուիլ Աճային պաշտամունքից և գայթակղիլ :

(3) . Ուստի այս հարցի նկատմամբ « Հայկական Աշխարհ » իբրեւ Հայ ժողովուրդի պատգամաւոր գոնեա՞ հրաւիրէ մեր հասարակաց Հայր Վեհափառ Հայրապետի քաղցր ուշադրութիւնը ընդհանուր եկեղեցիների վերայ , որ ամէն առաջնորդաբնակ քաղաքներում հաստատել տայ կղերական դպրոցներ և այնուհետև անաչառ քննիչներ ուղարկէ ամեն մի հայաբնակ քաղաքներ և գիւղեր , որպէս զի քաջանաների ոմանց զեղծմունքի դէմն առնելուց 'ի զատ՝ ընտրեն ժողովուրդից վկայեալ , բարեբարոյ և արժանաւոր քաջանայացուներ , և ուղարկել նոյն հաստատված կղերական դպրոցներ , սովորել դէ՞թ քահանայութեան վերաբերեալ հետեւեալ ուսմունքն . 1) Ս . Աւետարան և գործք առաքելոց հանդերձ աշխարհաբար թարգմանութեամբ . 2) Սուրբ Պատարագի արարողութեան կրթութիւն . 3) Ժամագրքի , շարականի , տօնացոյցի և մաշտոցի գործածութեան վարժութիւն . 4) Ազգային և սրբազան պատմութիւնների և քրիստոնէական վարդապետութեան դասեր . 5) Ազգային ձայնագրութեան (նօտայի) շարականի և ուրիշ եկեղեցական երգերի դասեր . 6) հովուութեան վերաբերեալ պարտքերի և բարոյական վարքի կրթութիւններ :

(1) . Երանե ինչ մի հասնաւոր ընկերութեան համ մի Բարբառի շնորհիւ Կապույտի Բաշմեի Աւարաբանի Գրաւոր Խաւհաբար , և արժան գնով Ժախուէն Խաւհայի հայաբնակ քաղաքներում և գեղերում Ըստ հրահանի վեհափառ Կաթողիկոսի Ռոյ :

Վերայիշեալ Կաթողիկոս հասնաւոր պայմաններով և որոշեալ չափաւոր առձեռնեցով հարող են ուսուցանել հայր վարդապետներ համ ուսեւ Խաւհանի և Կաթողիկոսի Ժախու հ'վճարվե Երախանի Ժողովարդ :

(4) . Ո՛ր ջապէս այս ամեն դասերը կարճ միջոցում ան-
շուշտ կարող են սովորել չափահաս տիրացուները , և յետոյ
ձեռնադրվել արժանաւոր քահանայ պէտք եղած քաղաքնե-
րի և գիւղերի համար , մինչև որ սուրբ Եջմիածնի բարեհալ-
չակ ճեմարանից դուրս գան հմուտ քահանայացուներ , հե-
տեալաբար և մեր ազգն կունենայ ուսեալ և բարեվարք եկե-
ղեցականներ , և այն ժամանակ ազատ կմնայ եկեղեցականու-
թիւնը թէ գրաւոր և թէ բանաւոր բամբասանքներից , և մեր
վհահափառ Հայրապետի ազգօգուտ նպատակը գործնականա-
պէս կպսակվի , և սրտի բաղձանքը կը լրանայ 'ի պարծանա
ազգին :



Գ Լ ՈՒ Խ ԺԸ .

ԲՈՂՈՔ ՄՕՐՍ ՄԵՐՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ա՛ռ ո՛րք Լեւոն-որիչ՝ և ո՞ր Հայկ նահապետ :

Ո՛վ դուք նահապետք որդւոց իմ թողանց ,
Տեսէ՛ք տեսարան դառն վիճակիս ,
Ասացէ՛ք որդւոցս հերիք չէ՞ ինձ այս՝
Եր թողուն 'ի սուգ որ ես տառապիմ .
Իմ տարիքս անցան միջակ դարերով ,
Յորմէ մնացի ես այրի անտէր ,
Կարծեն իմ որդիքս թէ ես մեռած եմ ,
Կերթան աստ և անդ 'ի խնդիր խորթ մօր :

Ասացէ՛ք նոցա ես կենդանի եմ ,
Երբեմն ես թմրած՝ բայց այժմ եմ արթուն ,
Ուրախ եմ արտով որ զիս կ'յիշեն ,
Յաճախ գրութեամբ զիս չեն մոռանար ,
Երբեմն և արդեամբ ուրախ և զուարթ
Իմ կենդանութեանս գինի կ'խմեն :
Ա՛խ , Արեմտեան եռանդուն որդիքս ,
Ղամբարնին վառած լուսոյ ջահերով ,
Քայլ առ քայլ կամին հասնիլ մօտենալ
Երբեմն գողալով՝ երբեմն նազելով .
Բայց աւանդ բախտիս , խոչնդոտն ունին
Ի ճանապարհին ապառաժ քարեր ,
Եկնեն դէմերնին , արգելունք կուտան ,
Չեն թողուր յառաջ գալ ինձ այցելու .
Եր փրչեն սաստիկ սառնացեալ քամի ,
Շիջուցեալ նոցա լուսափայլ ջահեր :
Ասացէ՛ք նոցա թող չվախենան ,
Այլ արիութեամբ յաղթեն՝ ինձ հասնին .
Իսկ Հիւսիսային ջանասէր որդիքս
Լաւ ունին սրտի մեծ արիութիւն ,
Ուրախ եմ ուրախ թող ետ չմնան ,
Ինձ մօտ են նոքա՝ զիս թող ճանաչեն .
Ասացէ՛ք նոցա ես եմ ձեր ծնող ,
Ձեր մայր հարազատ այրի տառապեալ ,
Դուք Հայր հարազատ , Ես մայր ստնտու ,
Անթիւ անհամար զաւակ ունեցանք ,
Բայց աւանդ , եղան շատեր ցիր ու ցան ,
Անդութ զազանաց ժանեաց կերակուր :
Ո՛վ դու նահապետ ծնող հոգւոր ,
Մեծ են քո արդիւնք և քո երախտիք ,
Քեզ շնորհապարտ հարազատ որդիքդ
Թող քեզ ճանաչեն հոգւոց լուսատու ,
Իսկ դու՛ Նահապետ իմ որդւոցս համայն ,
Խրախոյս կարգա՛ թող դիմեն յառաջ ,

Եւ զան զիս գտնեն իմ գիրկը բաղմեն,
Ո՛հ տան ինձ համբոյր սիրոյ գգուանաց:

Միւլարո-թիւն Կոյունց տա Հայաստան:

Իայց այլ ի՞նչ այդչափ ցաւօք անհնար,
Անձամբ չարաչար ողորմ կ'տանջիս,
Անձդ կ'հալես սիրտդ կմաշես,
Քեզի ի՞նչ եղաւ իմ մայր Հայաստան:
Ի՞նչ կուշաթափիս դիմօք թալկազին,
Դժուարին ցաւօք այդպէս տառապիս,
Մի լար ցաւազին բաց խուփ աչքերովդ,
Որ արտասուքներդ թառամեցուցին,
Զիւներ ու սառեր հալեցան արդէն,
Գարնան հոտաւէտ ծաղկունք բուրեցան,
Նշոյլ գիտութեան սակաւ առ սակաւ
Մտաւ որդւոցդ մէջ՝ լուսով զարգացան,
Ամէն մարդ սիրովն Աստուծոյ վառուած,
Ազգասիրութեան ոգւով զօրացան:
Մի լար արտասուեր ողբալի ձայնովդ,
Ահա քեզ պաշտպան վեհապետք հզօրք,
Թազաւորք ազգաց տիրեն քո որդւոց.
Ուրեմն մերկացիր սե քոյ երեսէդ,
Յորդորեմք սիրով հերիք է հերիք,
Մեք Հայր նախնիք քո որդւոց կողմէն,
Քեզ միւլթարել կը փութամք այսօր,
Ե՛լ դու սրտապինդ ուրախ և ղուարթ,
Հա ել ընդ առաջ քու զաւակներուդ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ի.

Ա Ն Ն Պ Ա Տ Ա Կ Ա Ն Ը Ա Հ Կ Տ Ա Կ

Որեւիցէ նիւթական կարողութիւն ունեցող բարեսիրտ
և բարեգործ անձն իրան ծանր հիւանդութեան միջոցում
կը ցանկայ մի օրինաւոր կտակ գրել տալ, և ինքն ստորա-
գրելը յետոյ վաւերացնել կտայ քաղաքական կառավարու-
թեան. և նոյն կտակագրի զօրութեան կտակակատարները
ըստ արժանւոյն կը պարտաւորին գործադրելու առանց փո-
փոխութեան, զի « կտակ յետ մահու » լինի հաստատուն, և
Եւ նոյն կտակագրում նշանակուած կը լինին կտակողի ունե-
ցած բոլոր հարստութիւնը որոշակի կերպով. և այնուհետեւ
մի երեւելի գումար կամ կալուած յատկացնել կտայ վարժա-
րանաց կամ ուրիշ հաստատութեանց և կամ թէ իւր ան-
ուամբ բացուելու մի վարժարանի. իսկ մնացեալ հարստու-
թեան մասը նշանակել կտայ իւր ժառանգորդներին, ինչպէս
և ինքն ցանկանում է. և իւր մահուանից յետոյ առանց որե-
ւիցէ անբաւականութեան կ'իրագործուի նոյն կտակը, և նորա
անունը կ'անմահանայ ցլաւիտեանս ժամանակաց. ինչպէս և
մեր ազգի մէջ գտնուեցան զանազան ժամանակներում թէ ե-
կեղեցական և թէ աշխարհական Պէդճեանի, Սամուէլ Մու-
րատի, Ռափայէլի, Ղազարեանցի, Շահնազարեանցի նման ար-
ժանայիշատակ բարեգործ անձինք:

Մանաւանդ թէ ժառանգ չունեցողները, որք իրանց ա-
ռողջ դատողութեամբ հաւաստի գիտեն թէ՛ մարդս մահկա-
նացու է, և իրան մահուանից յետոյ եթէ իւր ազատ կամքով
կտակ չաւանդէ, իմ գիտէ թէ ի՞նչ շահամիլ մարդկանց
ձեռքը անցնի իւր թողած հարստութիւնը և մի օգուտ չբե-

րէ, ոչ հոգւոյն և ոչ իւր անուան յիշատակութիւն, որոյ
համար իւր թաղման ծաղկսը դուրս բերելից յետոյ) և
յանձնէ կտակաւ իրան մնացած հարստութեան մեծ մասը . և
վարժարանի դրամագլուխ յատկանալու 'ի յիշատակութեան
անմահ անուան, և անշուշտ պատրաստ կըլինի անմահական
պսակին 'ի կեանս յաւիտենից :

(2) . Բայց տարաբախտաբար գտնվում են այնպիսի ժա-
ռանգ չունեցող այնիշատակ անձինք թէ հոգևորականներից
և թէ աշխարհականներից, որոնք առանց կտակ գրել տալու՝
յանկարծ վախճանում են, և եղած հարստութիւնը մնում
է բաղմաթիւ շահամոլ մարդկանց ձեռք . տեսնում ես ծա-
գում է նոցա մէջ անվերջանալի վէճ և կռիւ . գիտնում են
դատաստանատներին և բաւական գումար ևս 'ի զուր փա-
նում է, և հետևաբար հանգուցելոյ թողած հարստութիւն
լինում է մեծամեծ գայթակղութեանց և քնասակալի նորո-
թէ հոգւոյն և թէ այնիշատակ անուան . իսկ ոմանք իրանց ու-
նեցած բոլոր հարստութիւնը աննպատակ կերպով իբրև կը-
տակ՝ աւանդում են գրաւոր կերպով, որ բաշխեն եկեղե-
ցականաց և աղքատաց և իւր բոլոր բարեկամաց . և լինում է
աննպատակ անշահ կտակ . որովհետև կտակից մասնակից ե-
ղողները մի օրում մխոյնում են մի ամբողջ գումար, որ մի դը-
րամագլուխ կը լինէր որեւիցէ ազգային հատաստութեան, և
նորա մշտնջենական կառավարութեան . և նոյն հանգուցելոյ
յիշատակը կ'անմահանար ցյաւիտեան ժամանակաց :



2017



